

3058

Ի. ՄՏԱԼԻՆ

ԶՐՈՒՅՑ ԱՄԵՐԻԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ



ՀԱՅԿԱՆԱԳՐԱՆ • 1937 • ՅԵՐԵՎԱՆ

3K33

9-90



ՅԿՅՅ

2-90

այ.

Ի. ՍՏԱԼԻՆ

14 JUN 2005

20 NOV 2009

ԶՐՈՒՅՑ ԱՄԵՐԻԿԱՆ
ԱՌԱՋԻՆ՝ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ

1927 թ. սեպտեմբերի 9-ին

0 5 AUG 2013

3058

I

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՅԵՎ. ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

1-ին ՀԱՐՑ: Լենինը և կոմկուսակցությունը գործնականապես ի՞նչ նոր սկզբունքներ են ավելացրել մաքսիզմին: ձի՞՞ս կլինե՞ր տրդյո՞ւք ասել, թե Լենինը հավատում ե՞ր «սեղծագործական հեղափոխությանը», մինչդեռ Մաքսն ավելի հավատե՞ս եր սպասելու սեճե-ստեճան ուժերի գաղափարական զարգացմանը:

ՊԱՏԱՍԽԱՆ: Յես կարծում եմ, վոր Լենինը վոչ մի «նոր սկզբունք» չի «ավելացրել» մաքսիզմին, ինչպես վոր Լենինը չի վերացրել մաքսիզմի «հին» սկզբունքներից վոչ մեկը: Լենինը յեղել է և մնում է Մաքսի ու Ենգելսի ամենահավատարիմ ու հետևողական աշակերտը, վորն ամբողջապես ու լիովին հենվում է մաքսիզմի սկզբունքների վրա: Բայց Լենինը Մաքսի—Ենգելսի ուսմունքի միմիայն կատարողը չե՛ր: Նա դրա հետ մեկտեղ Մաքսի ու Ենգելսի ուսմունքի շարունակողն էր: Ի՞նչ է նշանակում այս: Այս նշանակում է, վոր նա ավելի զարգացրեց Մաքսի—Ենգելսի ուսմունքը՝ զարգացման նոր պայմաններին համապատասխան, կապիտալիզմի նոր փուլին համապատասխան, իմպերիալիզմին համապատասխան կերպով: Այս նշանակում է, վոր դասակարգային կռիվի նոր պայմաններում ավելի զարգացնելով Մաքսի ուսմունքը՝ Լենինը մաքսիզմի ընդհանուր դանձարանը մտցրեց ինչ-վոր նոր բան՝ համեմատած այն բանի հետ, ինչ վոր Մաքսն ու Ենգելսն եյին տվել, համեմատած այն բանի հետ, ինչ կարող էր տրվել մինչև իմպերիալիստական կապիտալիզմի ժամանակաշրջանում, ընդվորում այդ նորը, վոր Լենինը մտցրել է մաքսիզմի դանձարանը, ամբողջապես ու լիովին խառնված է Մաքսի ու Ենգելսի տված սկզբունքների վրա: Հենց այս իմաստով է, վոր մեզանում խոսվում է լենինիզմի՝ վորպես իմպերիալիզմի ու պրոլետարական հեղափոխությունների զարաշրջանի մաք-



536
40

И. СТАЛИН
БЕСЕДА С ПЕРВОЙ
АМЕРИКАНСКОЙ РАБОЧЕЙ
ДЕЛЕГАЦИЕЙ

Армшпартиздат, Ереван, 1937

սխալմի՝ մասին: Ահա մի քանի հարցեր, վորոնց բնագավառում Լենինը նոր բան է տվել՝ ավելի զարգացնելով Մարքսի ուսմունքը:

Նախ՝ մոնոպոլի տական կապիտալիզմի հարցը, իմպերիալիզմի՝ վորպես կապիտալիզմի նոր փուլի՝ հարցը: Մարքսն ու Ենգելսը «կապիտալում» տվել են կապիտալիզմի հիմունքների վերլուծությունը: Բայց Մարքսն ու Ենգելսն ապրում էին մինչև մոնոպոլիստական կապիտալիզմի տիրապետություն ժամանակաշրջանում, կապիտալիզմի սահուն եվրոպեյա կատարելու և ամբողջ յերկրագնդի վրա նրա «խաղաղ» տարածման ժամանակաշրջանում: Այդ հին փուլն ավարտվեց XIX դարի վերջին և XX-ի սկզբին, յերբ Մարքսն ու Ենգելսն արդեն կենդանի չէին: Հասկանալի չէ, վոր Մարքսն ու Ենգելսը կարող էին լուր կռահել կապիտալիզմի զարգացման այն նոր պայմանների մասին, վորոնք վրա հասան կապիտալիզմի հին փուլին հաջորդելու յեկած նոր փուլի կապակցությունը, զարգացման իմպերիալիստական, մոնոպոլիստական փուլի կապակցությունը, յերբ կապիտալիզմի սահուն եվրոպեյա կատարելուն փոխարինեց կապիտալիզմի թռիչքաձև, կատաստրոֆիկ զարգացումը, յերբ զարգացման անհավասարաչափությունն ու կապիտալիզմի հակասությունները հանդես յեկան առանձին ուժգնությունը, յերբ վաճառահանման շուկաների ու կապիտալի արտահանման համար մղվող պայքարը զարգացման ծայրահեղ անհավասարաչափության պայմաններում անխուսափելի դարձեց իմպերիալիստական պարբերական պատերազմներն աշխարհի ու ազդեցության վորորանների պարբերական վերաբաժանումների համար: Լենինի մատուցած ծառայությունը և, հետևապես, Լենինի մոտ նորն այստեղ այն է, վոր նա, հենվելով «կապիտալի» հիմնական դրույթների վրա, տվեց իմպերիալիզմի՝ վորպես կապիտալիզմի վերջին փուլի՝ հիմնավորված մարքսիստական վերլուծությունը, բաց անելով նրա խոցերն ու նրա անխուսափելի կործանման պայմանները: Այս վերլուծության բաղալի վրա ծագեց Լենինի հայտնի դրույթն այն մասին, վոր իմպերիալիզմի պայմաններում հնարավոր է սոցիալիզմի հաղթությունը առանձին, ջոկ վերցրած կապիտալիստական յերկիրներում:

Յերկրորդ, պրոլետարիատի զիկտատուրայի հարցը: Պրոլետարիատի զիկտատուրայի՝ վորպես պրոլետարիատի քաղաքական տիրապետության և վորպես կապիտալի իշխանությունը բռնություն միջոցով տապալելու մեթոդի՝ հիմնական գաղափարը տվեց

են Մարքսն ու Ենգելսը: Լենինի մոտ նորն այս բնագավառում այն է, վոր ա) նա հայտնագործեց յորհրդային իշխանությունը վորպես պրոլետարիատի զիկտատուրայի պետական ձև՝ դրա համար ոգտագործելով Փարիզի կոմունայի և ուստական հեղափոխությունի վորձը. բ) պրոլետարիատի դաշնակիցների վերաբերյալ պրոլետի տեսանկյունով նա բացեց պրոլետարիատի զիկտատուրայի ֆորմուլայի փակագծերը, պրոլետարիատի զիկտատուրան բնորոշելով վորպես ղեկավար հանդիսացող պրոլետարիատի դասակարգային դաշինքի հատուկ ձև վոչ-պրոլետարական դասակարգերի (գյուղացիության և այլ) շահագործվող մասսաների հետ, վորոնք ղեկավարվող են հանդիսանում. գ) նա առանձին ուժով ընդգծեց այն փաստը, վոր դասակարգային հասարակության պայմաններում պրոլետարիատի զիկտատուրան դեմոկրատիայի ամենաբարձր տիպն է, պրոլետարիատի դեմոկրատիայի ձևը, վորն արտահայտում է մեծամասնության (շահագործվողների) շահերը, — ի հակակշիռ կապիտալիստական դեմոկրատիայի, վորն արտահայտում է փոքրամասնության (շահագործողների) շահերը:

Յերրորդ, սոցիալիզմի հաջող կառուցման ձևերի ու յեղանակների հարցը պրոլետարիատի զիկտատուրայի ժամանակաշրջանում, կապիտալիզմից դեպի սոցիալիզմ ձգվող անցողիկ ժամանակաշրջանում, մի յերկրում, վոր շրջապատված է կապիտալիստական պետություններով: Մարքսն ու Ենգելսը դիտում էին պրոլետարիատի զիկտատուրայի ժամանակաշրջանը վորպես ավելի կամ պակաս յերկարատև մի ժամանակաշրջան, վորը լի չէ հեղափոխական գոտեմարտերով ու քաղաքացիական պատերազմներով, վորի տեղում լինելով, ձեռք է առնում տնտեսական, քաղաքական, կուլտուրական ու կազմակերպական բնույթի միջոցներ, վորոնք անհրաժեշտ են հին կապիտալիստական հասարակության փոխարեն նոր սոցիալիստական հասարակություն, առանց դասակարգերի հասարակություն, առանց պետության հասարակություն ստեղծելու համար: Լենինն ամբողջապես ու լիովին կանգնած եր Մարքսի ու Ենգելսի այս հիմնական դրույթների հողի վրա: Լենինի մոտ այս բնագավառում նորն այն է, վոր ա) նա հիմնավորեց լիակատար սոցիալիստական հասարակության կառուցման հնարավորությունն իմպերիալիստական պետություններով շրջապատված պրոլետարիատի զիկտատուրայի

յերկրում, պայմանով, վոր այդ յերկրը չխեղդվի շրջապատող կապիտալիստական պետութիւնների հաղմական ինտերվենցիայի կողմից. բ) նա ուրվագծեց տնտեսական քաղաքականութեան կոնկրետ ուղիները («նոր տնտեսական քաղաքականութիւն»), վորոնց ոգնութեամբ պրոլետարիատը, իր ձեռքին ունենալով տնտեսական իշխող բարձունքները (արդունաբերութիւնը, հողը, տրանսպորտը, բանկերը և այլն)՝ սոցիալիզացիայի յենթարկած ինդուստրիան զոգում է գյուղատնտեսութեան հետ («խնդուստրիայի զոգումը գյուղացիական տնտեսութեան հետ») և այդպիսով ամբողջ ժողովրդական տնտեսութիւնը տանում է դեպի սոցիալիզմ. գ) նա ուրվագծեց գյուղացիութեան հիմնական մասսաներին կոոպերացիայի միջոցով աստիճանաբար մոտեցնելու և սոցիալիստական շինարարութեան հունի մեջ ներգրավելու կոնկրետ ուղիները, կոոպերացիայի, վորը ներկայացնում է գյուղացիական մանր տնտեսութեան վերակերտման ու գյուղացիութեան հիմնական մասսաներին սոցիալիզմի վոգով վերադաստիարակելու մեծագույն մի միջոց պրոլետարիատի դիկտատուրայի ձեռքին:

Չորրորդ, պրոլետարիատի հեգեմոնիայի հարցը՝ հեղափոխութեան, ամեն մի ժողովրդական հեղափոխութեան մեջ, ինչպես ցարիզմի դեմ ուղղված հեղափոխութեան, այնպես եւ կապիտալիզմի դեմ ուղղված հեղափոխութեան մեջ: Մարքսն ու Էնգելսը տվել են պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարի հիմնական ուրվագծերը: Լենինի մոտ այստեղ նորն այն է, վոր նա ավելի զարգացրեց ու ծավալեց այդ ուրվագծերը՝ դրանք վերածելով պրոլետարիատի հեգեմոնիայի մի կուռ սիստեմի, քաղաքի ու գյուղի աշխատավոր մասսաներին վնչ միայն ցարիզմի ու կապիտալիզմի տապալման գործում, այլ և պրոլետարիատի դիկտատուրայի որով սոցիալիստական շինարարութեան գործում պրոլետարիատի կողմից ղեկավարելու մի կուռ սիստեմի: Հայտնի չէ, վոր պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարը Լենինի ու նրա կուսակցութեան շնորհիվ վարպետային կերպով դառավ Ռուսաստանում: Ի միջի այլոց սրանով է բացատրվում այն փաստը, վոր հեղափոխութիւնը Ռուսաստանում հանգեցրեց պրոլետարիատի իշխանութեանը: Առաջներում սովորաբար բանն այնպես եր տեղի ունենում, վոր հեղափոխութեան ժամանակ բաւրիկադները վրա կուվում եյին բանվորները, նրանք արյուն եյին թափում, նրանք տապալում եյին հինը, իսկ իշխանութիւնն

ընկնում եր բուրժուաների ձեռքը, վորոնք հետո ճնշում ու շահագործում եյին բանվորներին: Բանն այսպես է յեղել Անգլիայում ու Ֆրանսիայում: Բանն այսպես է յեղել Գերմանիայում: Մեղանում, Ռուսաստանում, բանն ուրիշ ընթացք ստացավ: Մեղանում բանվորները հեղափոխութեան հարվածային ուժը չեյին միայն: Լինելով հեղափոխութեան հարվածային ուժը՝ ուսական պրոլետարիատը դրա հետ մեկտեղ ջանում եր լինել քաղաքի ու գյուղի բոլոր շահագործվող մասսաների հեգեմոնը, քաղաքական ղեկավարը՝ նրանց իր շուրջը համախմբելով, նրանց բուրժուազիայից պոկելով, քաղաքականապես մեկուսացնելով բուրժուազիային: Իսկ շահագործվող մասսաների հեգեմոնը լինելով՝ ուսական պրոլետարիատն ամբողջ ժամանակ պայքարում եր հանուն այն բանի, վոր իշխանութիւնն իր ձեռքը վերցնի և այն ոգտագործի իր սևափական շահերի համար՝ բուրժուազիայի դեմ, կապիտալիզմի դեմ: Իսկապես սրանով եւ բացատրվում է այն, վոր հեղափոխութեան յուրաքանչյուր հուժկու յեղույթը Ռուսաստանում, ինչպես 1905 թվականի հոկտեմբերին, այնպես եւ 1917 թվականի փետրվարին, անպարեզ եր մղում բանվորական պատգամավորների խորհուրդները, վորպես իշխանութեան նոր ապարատի սաղմեր, — ապարատ, վորը կոչված է ճնշելու բուրժուազիային, — ի հակակշիռ բուրժուական պառլամենտի, վորպես իշխանութեան հին ապարատի, վորը կոչված է ճնշելու պրոլետարիատին: Բուրժուազիան մեղանում յերկու անգամ փորձել է վերականգնել բուրժուական պառլամենտը և վերջ դնել խորհուրդներին — 1917 թ. ոգոստոսին, «Նախապառլամենտի» ժամանակ, մինչև բոլշևիկների կողմից իշխանութիւնը վերցնելը, և 1918 թ. հունվարին, «Մահմանադիր Ժողովի» ժամանակ, իշխանութիւնը պրոլետարիատի կողմից վերցվելուց հետո, — ու ամեն անգամ պարտութիւն է կրել: Ինչո՞ւ: Վորովհետեւ բուրժուազիան արդեն քաղաքականապես մեկուսացված եր, աշխատավորների միլիոնավոր մասսաները պրոլետարիատին եյին համարում հեղափոխութեան միակ առաջնորդը, իսկ մասսաներն արդեն ստուգել ու փորձել եյին խորհուրդները, վորպես իրենց բանվորական իշխանութիւնը, վորին բուրժուական պառլամենտի հետ փոխելը պրոլետարիատի համար ինքնասպանութիւն կլինէր: Ուստի զարմանալի չէ, վոր բուրժուական պառլամենտարիզմը մեղ մոտ չպատվաստվեց: Ահա թե ինչու հեղափոխութիւնը Ռուսաստանում հասցրեց պրոլետարիատի իշխանութեանը: Սրանք են հեղափո-

խության մեջ պրոլետարիատի հեղեմոնիայի լենինյան սխտեմը կենսագործելու արդյունքները:

Հինգերորդ, ազգային-գաղութային հարցը: Մարքսն ու Են-գելսը, իր ժամանակին վերլուծելով Իռլանդիայում, Հնդկաստանում, Չինաստանում, Կենտրոնական Ֆեդերալիզացիոն յերկիրներում, Լեհաստանում, Հունգարիայում տեղի ունեցող անցքերը,—տվին ազգային-գաղութային հարցի հիմնական, մեկնակետային գաղափարները: Լենինն իր աշխատություններում հիմնվում էր այդ գաղափարների վրա: Լենինի մոտ այս բնագավառում նորն այն է, վոր ա) նա ի մի հավաքեց այդ գաղափարները և իմպերիալիզմի դարաշրջանի ազգային-գաղութային հեղափոխությունների վերաբերյալ հայացքների կուռ սխտեմի վերածեց. բ) ազգային-գաղութային հարցը կապեց իմպերիալիզմի տապալման հարցի հետ. գ) ազգային-գաղութային հարցը միջազգային պրոլետարական հեղափոխության ընդհանուր հարցի բաղկացուցիչ մասը հայտարարեց:

Վերջապես, պրոլետարիատի կուսակցության վերաբերյալ հարցը: Մարքսն ու Ենգելսը տվել են հիմնական ուղեգծեր կուսակցության՝ վորպես պրոլետարիատի առաջավոր ջոկատի՝ մասին, առանց վորի (առանց կուսակցության) պրոլետարիատը չի կարող հասնել իր ազատազրմանը վնչ իշխանությունը վերցնելու իմաստով, վնչ էլ կապիտալիստական հասարակությունը վերակառուցելու իմաստով: Լենինի մոտ այս բնագավառում նորն այն է, վոր նա ավելի զարգացրեց այդ ուղեգծերը՝ համապատասխան պրոլետարիատի պայքարի նոր պայմաններին իմպերիալիզմի ժամանակաշրջանում, ցույց տալով, վոր ա) կուսակցությունը պրոլետարիատի դասակարգային կազմակերպության բարձրագույն ձևն է՝ համեմատած պրոլետարիատի կազմակերպության այլ ձևերի հետ (արհմիություններ, կոոպերացիա, պետական կազմակերպություն), վորոնց աշխատանքը նա կոչված է ընդհանրացնելու և նրան ուղղություն տալու. բ) պրոլետարիատի զիկտատուրան կարող է իրականացվել միայն կուսակցության՝ վորպես նրան ուղղություն տվող ուժի՝ միջոցով. գ) պրոլետարիատի զիկտատուրան լիակատար կարող է լինել միայն այն դեպքում, յեթե նրան ղեկավարում է մի կուսակցություն, կոմունիստները կուսակցությունը, վորը ղեկավարությունը չի բաժանում և չպետք է բաժանի այլ կուսակցությունների հետ. դ) առանց կուսակցության մեջ յերկաթե կարգապահություն ունենա-

լու չեն կարող իրականացվել պրոլետարիատի զիկտատուրայի խնդիրները շահագործողներին ճնշելու և դասակարգային հասարակությունը սոցիալիստական հասարակություն վերակառուցելու վերաբերյալ:

Ահա հիմնականում այն նորը, ինչ տվել է Լենինն իր աշխատություններում՝ կոնկրետացնելով ու ավելի զարգացնելով Մարքսի ուսմունքը՝ համապատասխան պրոլետարիատի պայքարի նոր պայմաններին իմպերիալիզմի ժամանակաշրջանում:

Հենց այս պատճառով է, վոր մեզանում ասում են, թե լենինիզմն իմպերիալիզմի ու պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանի մարքսիզմն է:

Մրանից յերևում է, վոր լենինիզմը չի կարելի վնչ բաժանել մարքսիզմից, վնչ էլ առավել ևս հակադրել մարքսիզմին:

Պատվերակության տված հարցի մեջ այնուհետև ասված է. «Ճիշտ կլինի արդյոք ասել, թե Լենինը հավատում էր «ստեղծագործական հեղափոխությանը», մինչդեռ Մարքսն ավելի հավատում էր սպասելու տնտեսական ուժերի գաղաթնակետային զարգացմանը»: Յես կարծում եմ, վոր այսպես ասելը միանգամայն սխալ կլինի: Յես կարծում եմ, վոր ամեն մի ժողովրդական հեղափոխություն, յեթե նա իսկապես ժողովրդական հեղափոխություն է, ուրեմն ստեղծագործական հեղափոխություն է, վորովհետեւ նա ջարդում է հին կացութաձևը և կերտում, ստեղծում է նորը: Իհարկե, վոչ մի ստեղծագործական բան չի կարող լինել, թող ներվի ասել, այնպիսի «հեղափոխություններում», վորպիսիք յերեմն լինում են, ասենք, Ալբանիայում՝ մի շարք ցեղերի կողմից մյուսների դեմ հարուցվող խաղաղեքային «ապստամբությունների» ձևով: Բայց մարքսիստներն այդպիսի խաղաղեքային «ապստամբությունները» յերեք հեղափոխություն չեն համարել: Ակներե է, վոր խոսքն այդպիսի «ապստամբությունների» մասին չե, այլ ժողովրդական մասսայական հեղափոխության մասին է, վորը հարստահարված դասակարգերին վոտքի յե հանում հարստահարող դասակարգերի դեմ: Իսկ այսպիսի հեղափոխությունը չի կարող ստեղծագործական չլինել: Մարքսն ու Լենինը կողմնակից էին հենց այսպիսի հեղափոխության,— և միայն այսպիսի հեղափոխության: Ընդամեն հասկանալի յե, վոր այսպիսի հեղափոխությունը չի կարող ծագել ամեն պայմաններում, վոր նա կարող է բորբոքվել տնտեսական ու քաղաքական կարգի վորոշ բարենպաստ պայմաններում միայն:

2-րդ ՀԱՐՑ: Կտեի՞ր յե արդյո՞ւ ասել, թե կոմկուսակցութեանը վերահսկում ե կառավարութեանը:

ՊԱՏԱՍԽԱՆ: Ամեն ինչ կախված ե այն բանից, թե ինչպե՞ս հասկանանք վերահսկողութեանը: Կապիտալիստական յերկիրնե՜րում վերահսկողութեանը մի քիչ յուրորինակ կերպով ե հասկացվում: Յեա գիտեմ, վոր մի ամբողջ շարք կապիտալիստական կառավարութեաններ վերահսկողութեան են յենթարկվում խոշորագույն բանկերի կողմից, չնայած «գեմոկրատական» պառլամենտների գոյութեանը: Պառլամենտները հալատացնում են, թե հենց իրենք են վերահսկում կառավարութեաններին: Իսկ իրականում այնպե՞ս ե լինում, վոր խոշորագույն ֆինանսական կոնսորցիումներն են կանխորոշում կառավարութեանների կազմն ու վերահսկողութեան յենթարկում նրանց գործողութեանները: Ո՞ւմ հայտնի չե, վոր վոչ մի կապիտալիստական «տերութեան» մեջ չի կարող կարենա՞տ կազմվել խոշորագույն ֆինանսական տուգների կամքի հակառակ. բավական ե ֆինանսական ճնշում գործ դնել, — ե միևյանքները դիվանդանների պես կթռչեն իրենց պոստերից: Սա իսկապե՞ս բանկերի վերահսկողութեան ե կառավարութեանների նկատմամբ՝ հակառակ պառլամենտների յերեակայական վերահսկողութեան: Յեթե խոսքն այսպիսի վերահսկողութեան մասին ե, ապա յես պետք ե հայտարարեմ, վոր գրամապարկերի վերահսկողութեանը կառավարութեան նկատմամբ մեղանում անե՜րեակայելի յե ու միանգամայն բացառված, թեկուզ հենց այն պատճառով, վոր մեղանում բանկերը վաղուց ազգայնացված են, իսկ գրամապարկերը դուրս են շարտված ԽՍՀՄ-ից:

Գուցե պատվիրակութեանը ցանկանում եր հարցնել վո՞չ թե վերահսկողութեան մասին, այլ կուսակցութեան կողմից կառավարութեանը ղեկավարելու մասին: Յեթե պատվիրակութեանը ցանկանում եր այս մասին հարցնել, ապա յես պատասխանում եմ. այո՛, կուսակցութեանը մեղ մոտ ղեկավարում ե կառավարութեանը: Իսկ այս ղեկավարութեանը հաջողվում ե այն պատճառով, վոր կուսակցութեանը մեղանում վայելում ե բանվորների ու ընդհանրապես աշխատավորների մեծամասնութեան վստահութեանը ե նա իրավունք ունի այդ մեծամասնութեան անունով ղեկավարելու կառավարութեան որդաններին:

Ինչո՞վ ե արտահայտվում կառավարութեան ղեկավարումը ԽՍՀՄ-ի բանվորական կուսակցութեան կողմից, ԽՍՀՄ-ի կոմունիստական կուսակցութեան կողմից:

Նախ ե առաջ՝ նրանով, վոր մեր յերկրում պետական աշխատանքի հիմնական պոստերի համար կոմկուսակցութեանը ջանում ե խորհուրդների ու նրանց համագումարների միջոցով անցկացնել իր թեկնածուներին, իր լավագույն աշխատողներին, վորոնք նվիրված են պրոլետարիատի գործին ե պատրաստ են հավատով ու համարտութեամբ ծառայելու պրոլետարիատին: Յեվ այս նրան հաջողվում ե հսկայական մեծամասնութեան կազմող ղեկավարում, վորովհետեւ բանվորներն ու գյուղացիները վստահութեամբ են վերաբերվում կուսակցութեանը: Սա պատահականութեան չե, վոր իշխանութեան որդանների ղեկավարներ մեղանում հանդիսանում են կոմունիստները, վոր նրանք, այդ ղեկավարները, հսկայական հեղինակութեան են վայելում յերկրում:

Յերկրորդ՝ նրանով, վոր կուսակցութեանն ստուգում ե կառավարչութեան որդանների աշխատանքը, իշխանութեան որդանների աշխատանքը՝ ուղղելով սխալներն ու թերութեանները, առանց վորոնց չի լինում, — ուղենելով նրանց կենսագործելու կառավարութեան վճիռներն ու աշխատելով ապահովել մասսաների աջակցութեանը նրանց, ընդվորում նրանք վոչ մի կարևոր վճիռ չեն ընդունում առանց կուսակցութեան համապատասխան ցուցումների:

Յերրորդ՝ նրանով, վոր իշխանութեան այս կամ այն որդանների աշխատանքի պլանը մշակելիս, լինի դա արդյունաբերութեան ու գյուղատնտեսութեան գծով, թե առևտրի ու կուլտուրական շինարարութեան գծով, կուսակցութեանը տալիս ե ընդհանուր ղեկավար ցուցումներ, վորոնք վորոշում են այդ որդանների աշխատանքի բնույթն ու ուղղութեանն այդ պլանների գործողութեան ժամանակվա համար:

Բուրժուական մամուլը սովորաբար «զարմանք» ե արտահայտում կուսակցութեան կողմից պետութեան գործերին այսպես «միջամտելու» առթիվ: Բայց այդ «զարմանքն» ամբողջովին կեղծ ե: Հայտնի յե, վոր բուրժուական կուսակցութեանները կապիտալիստական յերկիրներում ճիշտ նույնպես «միջամտում են» պետութեան գործերին ու ղեկավարում կառավարութեաններին, ընդվորում ղեկավարութեանն այնտեղ կենտրոնանում ե խոշոր բանկերի հետ այս կամ այն կերպ կապված ե իրենց դերը, այդ պատճառով, բնակչութեանից թազցնել ջանացող անձերի մի նեղ շրջանի ձեռքում: Ո՞ւմ հայտնի չե, վոր յուրաքանչյուր բուրժուական կուսակցութեան Անգլիայում կամ ուրիշ կապիտալիստական յերկիրներում ունի իր գաղտնի կաբինետը՝ բաղկացած անձերի մի

նեւ շրջանից, վորոնք իրենց ձեռքում են կենտրոնացնում ղեկավարութիւնը: Վերհիշեցեք թեկուզ Լլոյդ Ջորջի հայտնի ճառը լիբերալ կուսակցութեան «ստվերային» կարէնետի մասին: Այս տեսակետից տարբերութիւնը խորհուրդներին յերկրի ու կապիտալիստական յերկիրներին միջև այն է, վոր ա) կապիտալիզմի յերկիրներում բուրժուական կուսակցութիւնները պետութիւնը ղեկավարում են բուրժուազիայի շահերի համար ու պրոլետարիատի դեմ, մինչդեռ ԽՍՀՄ-ում կոմկուսակցութիւնը պետութիւնը ղեկավարում է պրոլետարիատի շահերի համար ու բուրժուազիայի դեմ. բ) բուրժուական կուսակցութիւնները թագցնում են ժողովրդից իրենց ղեկավար դերը՝ դիմելով կասկածելի գաղտնի կարէնետներին ողնութեանը, մինչդեռ կոմկուսակցութիւնը ԽՍՀՄ-ում կարող է վոչ մի գաղտնի կարէնետի, նա նշավակում է գաղտնի կարէնետների քաղաքականութիւնն ու պրակտիկան և բացորոշ հայտարարում է ամբողջ յերկրի առաջ, վոր ինքն իր վրա յե վերցնում պետութեան ղեկավարման պատասխանատվութիւնը:

Պատկերացե՛ք մեկը: Նույն այդ հիմունքներով և կուսակցութիւնը ղեկավարում արմիրութիւններին:

Ստալին: Հիմնականում—այո: Ձեռնամուկներ կուսակցութիւնն արմիրութիւններին վոչ մի դիրեկտիվ չի կարող տալ: Բայց կուսակցութիւնը դիրեկտիվներ է տալիս արմիրութիւններում աշխատող կոմունիստներին: Հայտնի յե, վոր արմիրութիւններում կան կոմունիստների ֆրակցիաներ, ճիշտ այնպես, ինչպես նաև խորհուրդներում, կոոպերացիայում և այլն: Այդ կոմունիստական ֆրակցիաների պարտականութիւնն այն է, վոր համոզելու միջոցով արմիրութիւններին, խորհուրդներին, կոոպերացիայի և այլ որգաններում ընդունել տան այնպիսի վճիռներ, վորոնք համապատասխանում են կուսակցութեան դիրեկտիվներին: Յեւ այս նրանց հաջողութեւն է իրականացնել հսկայական մեծամասնութիւն կազմող ղեպներում, վորովհետև կուսակցութեան ազդեցութիւնը մասսաների մեջ հսկայական է, և նա այնտեղ մեծ վստահութիւն է վայելում: Այս ճանապարհով ենք հասնում պրոլետարիատի ամենաբազմազան կազմակերպութիւնների գործողութիւնների միասնականութեանը: Առանց դրան մենք տարբերութեան ու տարազարկ կունենայինք բանվոր դասակարգի այս կազմակերպութիւններին աշխատանքում:

3-րդ ՀԱՐՑ: Վարչապետ վոր Ռուսաստանում լեզալ է միայն մի

կուսակցութիւն, դուք վոր տեղից գիտեք, վոր մասնաճիւղեր համախառն են կոմունիզմին:

ՊԱՏԱՍԽԱՆ: Այդ ճիշտ է, վոր ԽՍՀՄ-ում չկան բուրժուական լեզալ կուսակցութիւններ, վոր այնտեղ լեզալութիւնից ողտվում է միայն մի կուսակցութիւն՝ բանվորների կուսակցութիւնը, կոմունիստների կուսակցութիւնը: Սակայն մենք ունենք արդյոք ճանապարհներ ու միջոցներ՝ համոզվելու այն բանին, վոր բանվորների մեծամասնութիւնը, աշխատավորական մասսաների մեծամասնութիւնը համակրում է կոմունիստներին: Խոսքը վերաբերում է, իհարկե, բանվորական ու գյուղացիական մասսաներին, այլ վոչ թե նոր բուրժուազիային, այլ վոչ թե հին շահագործողական դասակարգերի բեկորներին, վորոնց պրոլետարիատն արդեն ջախջախել է: Այո, մենք հնարավորութիւն ունենք, մենք ունենք ճանապարհներ ու միջոցներ՝ իմանալու, թե բանվորական ու գյուղացիական մասսաները համակրում են արդյոք, թե չեն համակրում կոմունիստներին: Վերցնենք մեր յերկրի կյանքի կարեւորագոյն մոմենտները և տեսնենք, արդյոք հիմք կա պնդելու, վոր մասսաներն իսկապես համակրում են կոմունիստներին:

Վերցնենք, ամենից առաջ, այնպիսի կարեւոր մոմենտ, ինչպես Հոկտեմբերյան հեղաշրջման ժամանակաշրջանն է 1917 թվականին, յերբ կոմունիստների կուսակցութիւնը, հենց վորպես կուսակցութիւն, բացորոշ կոչ էր անում բանվորներին ու գյուղացիներին՝ տապալելու բուրժուազիայի իշխանութիւնը, և յերբ նա, այդ կուսակցութիւնը, ստացավ բանվորների, զինվորների ու գյուղացիների հսկայական մեծամասնութեան աջակցութիւնը: Ի՞նչպես էր այն ժամանակ իրադրութիւնը: Իշխանութեան գլուխ կանգնած էյին սոցիալիստ-հեղափոխականներն (եւ-երներն) ու սոցիալ-դեմոկրատները (մենշեիկները), վորոնք բոլի եյին կազմել բուրժուազիայի հետ: Իշխանութեան ապարատը կենտրոնում ու տեղերում, ճիշտ այնպես, ինչպես նաև քսան միլիոնանոց բանակի հրամանատարութեան ապարատը, գտնվում էր այդ կուսակցութիւնների ձեռքում, կառավարութեան ձեռքում: Կոմունիստների կուսակցութիւնը գտնվում էր կիսալեզալ վիճակում: Բոլոր յերկիրների բուրժուաները գուշակում էյին բոլշեիկների կուսակցութեան անխուսափելի տապալումը: Անտանտն ամբողջապես ու լիովին Կերենսկու կառավարութեան կողմն էր կանգնած: Բայց և այնպես կոմունիստների կուսակցութիւնը, բոլշեիկների կուսակցութիւնը չէր զաղարում պրոլետարիատին կոչ անելուց՝ տապա-

լելու այդ կառավարութիւնը և հաստատելու պրոլետարիատի դիկտատուրա: Յեղ ինչ: Աշխատավոր մասսաների հսկայական մեծամասնութիւնը թիկունքում ու ճակատում ամենավճռակուն կերպով աջակցեց բոլշեւիկների կուսակցութեանը, — և կերեւսկու կառավարութիւնը տապալվեց, պրոլետարիատի իշխանութիւնը հաստատվեց: Ինչպես կարող եր պատահել, վոր բոլշեւիկներն այն ժամանակ հաղթող դուրս յեկան՝ չնայած բոլոր յերկիրներէ բուրժուաների թշնամական դուշակութիւններին՝ բոլշեւիկների կուսակցութեան կործանման մասին: Արդյոք այս հանգամանքը չի ապացուցում, վոր աշխատավորների լայն մասսաները համա- կրում են բոլշեւիկների կուսակցութեանը: Յեւ կարծում եմ, վոր ապացուցում ե: Ահա ձեզ բնակչութեան լայն մասսաներում կո- մունիստների կուսակցութեան ունեցած հեղինակութեան ու ազդեցութեան առաջին ստուգումը:

Վերցնենք հետևյալ ժամանակաշրջանը, ինտերվենցիայի ժա- մանակաշրջանը, քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջա- նը, յերբ անգլիական կապիտալիստներն ոկուպացիայի եյին. յենթարկել Ռուսաստանի Հյուսիսը, Արևմտահայկի ու Մուրմանի շրջանը, յերբ ամերիկյան, անգլիական, ճապոնական ու ֆրանսա- կան կապիտալիստներն ոկուպացիայի եյին յենթարկել Միբրը՝ առաջ քաշելով Կոլչակին, յերբ ֆրանսական ու անգլիական կապի- տալիստները «Ռուսաստանի Հարավի» ոկուպացիայի քայլեր ձեռ- նարկեցին, վահանի վրա բարձրացնելով Դենիկինին ու Վրանգե- լին: Դա Անտանտի ու Ռուսաստանի հակահեղափոխական գնեհ- բանի պատերազմն եր Մոսկովայի կոմունիստական կառավա- րութեան դեմ, մեր հեղափոխութեան հոկտեմբերյան նվաճումների դեմ: Դա բանվորների ու դյուղացիների լայն մասսաներում կո- մունիստների կուսակցութեան ունեցած ուժն ու կայունութիւնը մեծագոյն ստուգման յենթարկելու ժամանակաշրջանն եր: Յեղ ինչ: Միթե հայտնի չի, վոր քաղաքացիական պատերազմի ար- դյունքն այն յեղավ, վոր ոկուպանտները դուրս չպրտվեցին Ռու- սաստանից, իսկ հակահեղափոխական գնեհբաններն Կարմիր բա- նակը կոտորեց: Ահա հենց այստեղ պարզվեց, վոր պատերազմի բախտը, վերջին հաշիւով, վճռում ե վնչ թե տեխնիկան, վոր առատորեն մատակարարում եյին Կոլչակին ու Դենիկինին իՍՀՄ-ի թշնամիները, այլ ճիշտ քաղաքականութիւնը, բնակչութեան միլիոնավոր մասսաների համակրանքն ու աջակցութիւնը: Պա- տահական բան ե արդյոք, վոր բոլշեւիկների կուսակցութիւնն

այն ժամանակ հաղթող դուրս յեկավ: Իհարկե, պատահական բան չե: Այս հանգամանքը չի խոսում արդյոք այն մասին, վոր կոմունիստների կուսակցութիւնը մեղ մոտ վայելում ե աշխա- տավորների լայն մասսաների համակրանքը: Յեւ կարծում եմ, վոր խոսում ե: Ահա ձեզ իՍՀՄ-ում կոմունիստական կուսակցու- թեան ունեցած ուժի ու կայունութեան յերկրորդ ստուգումը:

Անցնենք ներկա ժամանակաշրջանին, հետպատերազմյան ժամանակաշրջանին, յերբ հերթի դրվեցին խաղաղ շինարարու- թեան հարցերը, յերբ տնտեսական ավերմունքի շրջանին փոխա- րինեց ինդուստրիայի վերականգնման շրջանը, վերջապէս՝ մեր ամբողջ ժողովրդական տնտեսութիւնը տեխնիկական նոր բազա- յի վրա վերակառուցելու շրջանը: Արդյոք այժմ ճանապարհներ ու միջոցներ ունենք մենք, վորպեսզի ստուգենք կոմունիստների կուսակցութեան ուժն ու կայունութիւնը, վորպեսզի վորոշենք աշխատավորների լայն մասսաների կողմից դեպի այս կուսակցու- թիւնը տածվող համակրանքի աստիճանը: Յեւ կարծում եմ, վոր ունենք:

Վերցնենք ամենից առաջ արհմիութիւնները, վորոնք միա- վորում են մոտ 10 միլիոն պրոլետարներ, տեսնենք մեր արհմիու- թիւնների ղեկավար որգանների կազմը: Պատահական ե արդյոք, վոր այս որգանների գլուխ կոմունիստներն են կանգնած: Իհարկե, պատահական չե: Հիմար բան կլիներ կարծել, թե իՍՀՄ-ի բան- վորներն անտարբեր են վերաբերվում դեպի արհմիութիւնների ղեկավար որգանների կազմը: ԻՍՀՄ-ի բանվորներն աճել ու դաստիարակվել են յերեք հեղափոխութիւնների փոթորիկի մեջ: Վոչ վոք այնպես չի սովորել, ինչպես նրանք՝ ստուգել իրենց ղեկավարներին և նրանց դուրս շարտել, յեթե նրանք պրոլետա- րիատի շահերին չեն բավարարում: Մեր կուսակցութեան մեջ մի ժամանակ ամենաժողովրդական մարդը Պլեխանովն եր: Սա- կայն բանվորները կանգ չառան այն բանի առաջ, վորպեսզի վճռաբար մեկուսացնեն նրան, յերբ նրանք համոզվեցին, վոր Պլեխանովը հեռացել ե պրոլետարական գծից: Յեղ յեթե այդպիսի բանվորներն արտահայտում են իրենց լիակատար վստահութիւնը կոմունիստներին՝ նրանց առաջ քաշելով արհմիութիւններում պատասխանատու պոստերի համար, ապա այդ չի կարող ուղղակի մատնանշումն չծառայել այն բանի, վոր կոմունիստական կու- սակցութեան ուժն ու կայունութիւնը իՍՀՄ-ի բանվորների շրջանում — հսկայական են: Ահա ձեզ ստուգումն այն բանի, վոր

835
40

բանվորները լայն մասսաներն անպայման համակրում են կոմունիստներին կուսակցութեանը:

Վերցնենք խորհուրդների վերջին ընտրութեանները: Մեզանում խորհուրդների ընտրութեան իրավունքը վայելում է ԽՍՀՄ-ի ամբողջ չափահաս բնակչութեանը սկսած 18 տարեկան հասակից, առանց սեռի ու ազգութեան խտրութեան, միևնույն բուրժուական տարրերը, վորոնք շահագործում են ուրիշի աշխատանքը և զրկված են ընտրական իրավունքներից: Այդ կազմում է մոտ 60 միլիոն ընտրող: Դրանց հսկայական մեծամասնութեանը, իհարկե, գյուղացիներն են: Այդ 60 միլիոնից ընտրական իրավունքներն իրականացրին մոտ 51 տոկ, այսինքն՝ 30 միլիոնից ավելին: Հիմա աչքի անցկացրեք մեր խորհուրդների ղեկավար որդանների կազմը կենտրոնում ու տեղերում: Կարելի՞ չէ արդյոք պատահականութեան անվանել այն փաստը, վոր ընտրովի ղեկավար տարրերի հսկայական մեծամասնութեանը կոմունիստներն են կազմում: Պարզ է, վոր այս չի կարելի պատահականութեան անվանել: Արդյոք այս փաստը չի՞ խոսում այն մասին, վոր կոմունիստական կուսակցութեանը վստահութեան է վայելում գյուղացիութեան միլիոնավոր մասսաների շրջանում: Յես կարծում եմ, վոր խոսում է: Ահա ձեզ կոմունիստական կուսակցութեան ուժի ու կայունութեան դարձյալ մի ստուգում:

Վերցնենք կոմիտեիսիստութեանը (յերիտասարդութեան կոմունիստական միութեանը), վորը միավորում է մոտ 2 միլիոն բանվորական ու գյուղացիական յերիտասարդութեան: Կարելի՞ չէ արդյոք պատահականութեան անվանել այն փաստը, վոր կոմիտեիսիստութեան ընտրովի ղեկավար տարրերի հսկայական մեծամասնութեանը կազմում են կոմունիստները: Յես կարծում եմ, վոր այս չի կարելի պատահականութեան անվանել: Ահա ձեզ կոմունիստական կուսակցութեան ուժի ու հեղինակութեան դարձյալ մի ստուգում:

Վերցնենք, վերջապես, մեր անթիվ կոնֆերենցիաները, խորհրդակցութեանները, պատվիրակային ժողովները և այլն, վորոնք ընդգրկում են ԽՍՀՄ-ի կազմի մեջ մասնող բոլոր ու ամեն տեսակի ազգութեանների աշխատավոր տղամարդկանց ու կանանց, բանվորների ու բանվորուհիների, գյուղացիների ու գեղջկուհիների միլիոնավոր մասսաներ: Այս խորհրդակցութեանների ու կոնֆերենցիաների մասին Արևմուտքում յերբեմն հեղուկ են՝ պնդելով թե ուսաներն առհասարակ սիրում են խոսել: Այնինչ մեզ համար

այդ խորհրդակցութեաններն ու կոնֆերենցիաներն ունեն հրակայան նշանակութեան ինչպես մասսաների տրամադրութեանն ստուգելու իմաստով, այնպես ել մեր սխալներն ի հայտ բերելու և այդ սխալները վերացնելու միջոցներ նշելու իմաստով, վորովհետև մեզանում քիչ չեն սխալները, և մենք դրանք չենք թաղցնում՝ յենթադրելով, վոր սխալներն ի հայտ բերելն ու նրանք աղնվորեն ուղղելը յերկրի ղեկավարումը բարելավելու լավագույն միջոցն է: Աչքի անցկացրեք այդ կոնֆերենցիաների ու խորհրդակցութեանների հեռտորների ճառերը, աչքի անցկացրեք բանվորներից ու գյուղացիներից յեկտե՞ այդ «հասարակ մարդկանց» դործարարական ու անխորամանկ դիտողութեանները, աչքի անցկացրեք նրանց վճիռները, — և դուք կտեսնեք, թե վորչափ հսկայական են կոմունիստական կուսակցութեան ազդեցութեանն ու հեղինակութեանը, դուք կտեսնեք, վոր այդ ազդեցութեանն ու այդ հեղինակութեանը կարող եր նախանձել աշխարհիս ամեն մի կուսակցութեան: Ահա ձեզ կոմունիստական կուսակցութեան կայունութեան դարձյալ մի ստուգում:

Սրանք են այն ճանապարհներն ու միջոցները, վորոնք հնարավորութեան են տալիս ստուգելու կոմունիստական կուսակցութեան ուժն ու ազդեցութեանը ժողովրդական մասսաների մեջ:

Ահա թե ինձ վորտեղից է հայտնի, վոր ԽՍՀՄ-ի բանվորների ու գյուղացիների լայն մասսաները համակրում են կոմունիստական կուսակցութեանը:

4-րդ ՀԱՐՑ: Յեքե տնկուսակցական մի խումբ ֆրակցիա կազմակերպեք և քննարկումներում առաջադրեք իր քեկնածուներին, վորոնք կանգնած են խորհրդային կառավարությանն՝ ազդեցելու պլաֆորմի վրա, բայց դրա հետ մեկտեղ տրաֆին առևտրի մոնոպոլիայի վերացում պահանջեք, — արդյո՞ք նրանք կկարողանային՞ իրենց միջոցներն ունենալ և ախիլ փաղափակ կամպանիա մղել:

ՊԱՏԱՍԽԱՆ: Յես կարծում եմ, վոր այն հարցում անհաշտելի հակասութեան կա: Անկարելի չէ պատկերացնել վորեւ մի խումբ, վորը կանգնած լինի խորհրդային կառավարութեանն աշակցելու պլատֆորմի վրա և դրա հետ մեկտեղ պահանջի վերացնել արտաքին առևտրի մոնոպոլիան: Ինչո՞ւ: Այն պատճառով, վոր արտաքին առևտրի մոնոպոլիան խորհրդային կառավարութեան «պլատֆորմի» անհողողող հիմքերից մեկն է: Այն պատ-

ճառով, վոր արտաքին առևտրի մոնոպոլիայի վերացում պահանջող խումբը չի կարող խորհրդային կառավարութեանն աջակցելու կողմնակից լինել: Այն պատճառով, վոր այդպիսի խումբը կարող է լինել միայն մի խումբ, վորը խորապես թշնամի չէ ամբողջ խորհրդային հասարակակարգին:

ԽՍՀՄ-ում կան, իհարկե, տարբեր, վորոնք արտաքին առևտրի մոնոպոլիայի վերացումն են պահանջում: Այդ նեպաժաններն են, կուլակները, արդեն ջախջախված շահագործող դասակարգերի բեկորները և այլն: Բայց այս տարրերը բնակչութեան չնչին փոքրամասնութիւնն են կազմում: Յետ կարծում եմ, վոր պատվիրակութիւնն իր տված հարցում այս տարրերի մասին չէ, վոր խոսում ե: Իսկ յեթե խոսքը վերաբերում է բանվորներին ու գյուղացիներին աշխատավորական մասսաներին, ապա յետ և ասեմ, վոր արտաքին առևտրի մոնոպոլիայի վերացման պահանջը նրանց շրջանում կարող եր լոկ քրքիջ ու թշնամական վերաբերմունք առաջացնել:

Իրոք, բանվորներին համար ի՞նչ կարող եր նշանակել արտաքին առևտրի մոնոպոլիայի վոչնչացումը: Այս նրանց համար կնշանակել հրաժարումն յերկիրն ինդուստրացնելուց, նոք գործարաններ ու ֆաբրիկաներ կառուցելուց, հին գործարաններն ու ֆաբրիկաներն ընդլայնելուց: Այս նրանց համար կնշանակել ԽՍՀՄ-ն հեղեղել կապիտալիստական յերկիրներից յեկող ապրանքներով, կծկել մեր ինդուստրիան նրա համեմատական թուլութեան շնորհիվ, բազմապատկել գործազուրկների թիվը, վատթարացնել բանվոր դասակարգի նյութական դրութիւնը, թուլացնել նրա տնտեսական ու քաղաքական դիրքերը: Վերջին հաշվով այս կնշանակել ուժեղացնել նեպաժանին ու առհասարակ նոր բուրժուազիային: ԽՍՀՄ-ի պրոլետարիատը կարող է արդէ և արդէ ու այս ինքնասպանութեանը դիմել: Պարզ է, վոր չի կարող:

Իսկ գյուղացիութեան աշխատավոր մասսաների համար ի՞նչ կնշանակել արտաքին առևտրի մոնոպոլիայի վոչնչացումը: Այդ կնշանակել մեր յերկիրն ինքնուրույն յերկրից մի կիսադադութային յերկրի վերածել ու գյուղացիական մասսաներին աղքատացնել: Այդ կնշանակել դարձ դեպի այն «ազատ առևտրի» ուժեղում, վորը թագավորում եր Կոլչակի ու Դենիկինի որով, յերբ հակահեղափոխական զենեքալիներն ու «գաշնակիցներն» միացալ ուժերի համար հեշտ եր բազմամիլիոն գյուղացիութեանը թալանելն ու կողոպտելը: Վերջին հաշվով այդ կնշանակել կուլակներին

ու այլ շահագործող տարրերին ուժեղացում գյուղում: Գյուղացիները բավականաչափ ճաշակել են այդ ուժի մի սքանչելիքներն Ուկրաինայում ու Հյուսիսային Կովկասում, Վոլդայի ամերում ու Սիբիրում: Ի՞նչ հիմքեր կան յենթադրելու, վոր նրանք կցանկանան նորից այդ ողն իրենց վիզը գցել: Միթե պարզ չէ, վոր գյուղացիութեան աշխատավոր մասսաները չեն կարող արտաքին առևտրի մոնոպոլիայի վոչնչացման կողմնակից լինել:

Պատվիրակութիւնը մեկը: Պատվիրակութիւնն առաջադրեց արտաքին առևտրի մոնոպոլիայի վերաբերյալ, նրա վերացման վերաբերյալ կետը վորպես մի կետ, վորի շուրջը կարող կլինել կազմակերպվել բնակչութեան մի ամբողջ խումբ, յեթե ԽՍՀՄ-ում մի կուսակցութեան մոնոպոլիա, լեզալութեան մոնոպոլիա չլինել:

Ստալին: Այսպիսով պատվիրակութիւնը վերադառնում է կուսակցական կուսակցութեան՝ վորպես ԽՍՀՄ-ում միակ լեզալ կուսակցութեան՝ մոնոպոլիայի հարցին: Այս հարցի կարճ պատասխանը յետ արդեն տվի, յերբ խոսում եյի բանվորների ու գյուղացիների միլիոնավոր մասսաների դեպի կոմունիստական կուսակցութիւնը տածած համակրանքն ստուգելու ճանապարհների ու յեղանակների մասին: Ինչ վերաբերում է բնակչութեան մյուս խավերին, — կուլակներին, նեպաժաններին, ջախջախված հին շահագործողական դասակարգերի մնացորդներին, — ապա նրանք մեղանում զրկված են իրենց քաղաքական կազմակերպութիւնն ունենալու իրավունքից՝ ճիշտ այնպես, ինչպես վոր նրանք զրկված են ընտրական իրավունքներից: Պրոլետարիատը բուրժուազիայից ֆաբրիկաներն ու գործարանները, բանկերն ու յերկաթուղիները, հողն ու հանքահորերը չէ միայն, վոր խլել է: Նա բուրժուազիայից խլել է նաև իր քաղաքական կազմակերպութիւնն ունենալու իրավունքը, վորովհետեւ պրոլետարիատը բուրժուազիայի իշխանութեան վերականգնումը չի ցանկանում: Պատվիրակութիւնն, ըստ յերևութին, առարկութիւններ չունի այն բանի դեմ, վոր ԽՍՀՄ-ի պրոլետարիատը բուրժուազիայից ու կալվածատերերից խլել է ֆաբրիկաներն ու գործարանները, հողն ու յերկաթուղիները, բանկերն ու հանքահորերը: (Ծիծաղ): Բայց պատվիրակութիւնը, ինչպես ինձ թվում է, փոքր ինչ տարակուսում է այն առթիվ, վոր պրոլետարիատը դրանով չբավականացավ ու ավելի առաջ գնաց՝ բուրժուազիայից խլելով քաղաքական իրավունքները: Սա, ըստիս, այնքան ել տրամաբանական չէ կամ, ավելի ճիշտը, բոլորովին տրամաբանական չէ: Ի՞նչ

հիման վրա յեն պրոլետարիատից մեծահոգություն պահանջում բուրժուազիայի նկատմամբ: Միթե բուրժուազիան Արեւմուտքում, իշխանության գլուխ գտնվելով, թեկուզ ամենափոքր մեծահոգություն է ցուցաբերում բանվոր դասակարգի նկատմամբ: Միթե նա ընդհատակ չի քշում բանվոր դասակարգի խսկապես հեղափոխական կուսակցություններին: Խոչ հիման վրա յեն ԽՍՀՄ-ի պրոլետարիատից մեծահոգություն պահանջում դեպի իր դասակարգային թշնամին: Յես կարծում եմ, վոր տրամաբանությունը պարտավորեցնում է: Նա, ով մտածում է բուրժուազիային նրա քաղաքական իրավունքները վերադարձնելու հնարավորության մասին, նա պետք է, յեթե նա ուզում է տրամաբանական լինել, ավելի հեռուն գնա և ֆարքիկաներն ու զործաւանները, յերկաթուղիներն ու բանկերը բուրժուազիային վերադարձնելու հարցը ևս դնի:

Պատվիրակներից մեկը: Պատվիրակության խնդիրն եր' պարզել, թե ինչ կերպ կարող են իրենց լեզու արտահայտությունը գտնել բանվոր դասակարգի ու գյուղացիության մեջ յեղած այն կարծիքները, վորոնք տարբեր են կոմկուսակցության կարծիքներից: Սխալ կլինե՞ր բանն այնպես հասկանալ, թե պատվիրակությունը հետաքրքրվում է բուրժուազիային քաղաքական իրավունքներ տալու հարցով, այն հարցով, թե բուրժուազիան ինչպես կարող է իր կարծիքներն ի հայտ բերելու լեզու արտահայտություն գտնել: Ոոսքը հենց այն մասին է, թե ինչ կերպ կարող են իրենց լեզու արտահայտությունը գտնել բանվոր դասակարգի ու գյուղացիության մեջ յեղած այն կարծիքները, վորոնք տարբեր են կոմկուսակցության կարծիքներից:

Մեկ ուրիշ պատվիրակ: Այդ տարբեր կարծիքները կկարողանային իրենց արտահայտությունը գտնել բանվոր դասակարգի մասսայական կազմակերպություններում, արհմիություններում և այլն:

Ստալին: Շատ լավ: Հետեւեալը, խոսքը բուրժուազիայի քաղաքական իրավունքների վերականգնման մասին չէ, այլ կարծիքների պայքարի մասին բանվոր դասակարգի ու գյուղացիության ներսում: Արդյոք ներկայումս կարծիքների պայքար տեղի ունի՞ բանվորների ու գյուղացիության աշխատավոր մասսաների շրջանում: Անպայման տեղի ունի: Զի կարող լինել, վոր միլիոնավոր բանվորներն ու գյուղացիները միանման մտածեն: Այդպիսի բան կյանքում չի լինում: Նախ, բանվորների ու գյուղացի-

ցիների միջև մեծ տարբերություն կա թե նրանց սոստեսական գրության իմաստով, թե այս կամ այն հարցերի վերաբերյալ նրանց հայացքների իմաստով: Յերկրորդ, հայացքներում վորոշ տարբերություններ գոյություն ունեն բանվոր դասակարգի մեջ ել—դաստիարակության տարբերություն, հասակների, խառնվածքի տարբերություն, տարբերություն բնիկ բանվորների ու գյուղից յեկած բանվորների միջև և այլն: Այս ամենը տանում է դեպի կարծիքների պայքար բանվորների ու գյուղացիության աշխատավոր մասսաների մեջ, վորն իր լեզու արտահայտությունն ստանում է ժողովներում, արհմիություններում, կոոպերացիայում, խորհուրդների ընտրությունների ժամանակ և այլն:

Իսկ այժմ, պրոլետարական դեկտատուրայի պայմաններում, տեղի ունեցող կարծիքների պայքարն ու անցյալում, մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, տեղի ունեցած կարծիքների պայքարի միջև արմատական տարբերություն գոյություն ունի: Այն ժամանակ, անցյալում, կարծիքների պայքարը բանվորների ու աշխատավոր գյուղացիների շրջանում՝ կենտրոնանում եր գլխավորապես կալվածատերերին, ցարիզմը, բուրժուազիային տապալելու հարցերի վրա, բուրժուական կարգերը ջարդելու վրա: Հիմա, պրոլետարիատի դեկտատուրայի պայմաններում, կարծիքների պայքարն ընթանում է վնչ թե խորհրդային իշխանությունը տապալելու, խորհրդային կարգերը ջարդելու հարցերի շուրջը, այլ խորհրդային իշխանության որդանները բարեւաւելու, նրանց աշխատանքը բարեւաւելու հարցերի շուրջը: Այստեղ արմատական տարբերություն կա: Զարմանալի վոչինչ չկա այն բանում, վոր գոյություն ունեցող կարգերը հեղափոխականորեն ջարդելու հարցի շուրջը յեղած կարծիքների պայքարն անցյալում հիմք եր տալիս, վորպեսզի բանվոր դասակարգի ու գյուղացիության աշխատավորական մասսաների ներսում յերևան գան միմյանց դեմ մրցող միքանի կուսակցություններ: Այդ կուսակցություններն եյին՝ բոլշեւիկների կուսակցությունը, մենշեւիկների կուսակցությունը, ես-երների կուսակցությունը: Մյուս կողմից, բնավ դժվար չէ հասկանալ նաեւ այն, վոր կարծիքների պայքարն այժմ, պրոլետարիատի դեկտատուրայի որով, պայքար, վորի նպատակն է գոյություն ունեցող խորհրդային կարգերի վնչ թե ջարդումը, այլ նրանց բարեւաւելումն ու ամրապնդումը, բանվորների ու գյուղի աշխատավորական մասսաների շրջանում միքանի կուսակցությունների գոյության համար սնունդ չի տալիս: Ահա թե ինչու

միայն մի կուսակցութեան, կոմունիստների կուսակցութեան լեզաւութեանը, այդ կուսակցութեան մոնոպոլիան վնչ միայն առարկութեանը չի առաջացնում բանվորներին ու աշխատավոր գյուղացիներին շրջանում, այլ, ընդհակառակն, ընդունվում է վերապես ինչ-որ անհրաժեշտ ու ցանկալի մի բան:

Մեր կուսակցութեան՝ վերապես յերկրում միակ լեզաւ կուսակցութեան՝ գրութեանը (կոմկուսակցութեան մոնոպոլիա) արհեստական և միտումով հնարված վորեւ բան չէ: Այսպիսի գրութեանը չի կարող ստեղծվել արհեստականորեն, վարչական մեքենայութեանների և այլնի միջոցով: Մեր կուսակցութեան մոնոպոլիան կյանքից է աճել, պատմականորեն կազմավորվել վերապես արդյունք այն բանի, վոր ես-երների ու մենշևիկների կուսակցութեանները մեր իրականութեան պայմաններում վերջնականապես սնանկացան ու թափարեւից հեռացան: Ինչ էլին ես-երների ու մենշևիկների կուսակցութեաններն անցյալում: Պրոլետարիատի նկատմամբ բուրժուական ազդեցութեան հաղորդողներ: Ինչո՞ւ եր անվում ու պահպանվում այդ կուսակցութեանների գոյութեանը մինչև 1917 թվի հոկտեմբերը: Բուրժուաների դասակարգի առկայութեամբ, վերջապես բուրժուական իշխանութեան առկայութեամբ: Միթե պարզ չէ, վոր բուրժուազիայի տապալմամբ պետք է անհետանային այդ կուսակցութեանների գոյութեան հիմքերը: Իսկ ի՞նչ դարձան այդ կուսակցութեանները 1917 թվի հոկտեմբերից հետո: Նրանք դարձան կապիտալիզմի վերականգնման ու պրոլետարիատի իշխանութեան տապալման կուսակցութեաններ: Միթե պարզ չէ, վոր այդ կուսակցութեանները պետք է ամեն մի հող ու ամեն մի ազդեցութեան կորցնեյին բանվորական մասսաների ու գյուղացիութեան աշխատավորական շերտերի մեջ:

Բանվոր դասակարգի վրա ազդեցութեան ունենալու համար կոմունիստների կուսակցութեան և ես-երների ու մենշևիկների կուսակցութեանների միջև մղվող պայքարը յերեկվանից չի սկսվել: Նրա սկիզբը համարում են մասսայական հեղափոխական շարժման առաջին նշանների մոմենտը Ռուսաստանում, դեռևս 1905 թվից առաջ: 1903 թ. մինչև 1917 թվի հոկտեմբերը յեղած ժամանակաշրջանը մեր յերկրի բանվոր դասակարգի մեջ կարծիքների կատարի պայքարի ժամանակաշրջան է, բոլշևիկների, մենշևիկների ու ես-երների միջև բանվոր դասակարգի մեջ ունենալիք ազդեցութեան համար մղվող պայքարի ժամանակաշրջան:

Այդ ժամանակաշրջանում ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգը յերեք հեղափոխութեան բովով անցավ: Նա այդ հեղափոխութեանների կրակի մեջ եր փորձում ու ստուգում այդ կուսակցութեաններին, նրանց պիտանիութեանը պրոլետարական հեղափոխութեան գործի համար, նրանց պրոլետարական հեղափոխականութեանը: Յե՛վ ահա, 1917 թվի հոկտեմբերյան որերին, յերբ պատմութեանն ամփոփեց անցյալ ամբողջ հեղափոխական կռիւ արդյունքները, յերբ պատմութեանն իր կշեռքով կշեց բանվոր դասակարգի ներսում կռիւղ կուսակցութեանների տեսակարար կշիռը, — ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգը, վերջապես, կատարեց վերջնական ընտրութեանը՝ կանգ առնելով կոմունիստական կուսակցութեան՝ վերապես միակ պրոլետարական կուսակցութեան՝ վրա: Ինչո՞ւ լրացատրել այն փաստը, վոր բանվոր դասակարգի ընտրութեանը կանգ առավ կոմունիստական կուսակցութեան վրա: Միթե սա փաստ չէ, վոր բոլշևիկները Լենինգրադի խորհրդում, որինակ, 1917 թվի ապրիլին, աննշան փոքրամասնութեան էյին: Միթե սա փաստ չէ, վոր ես-երներն ու մենշևիկներն այն ժամանակ խորհուրդներում հսկայական մեծամասնութեան ունեյին: Միթե սա փաստ չէ, վոր մինչհոկտեմբերյան որերին իշխանութեան ամբողջ ապարատն ու հարկադրման բոլոր միջոցները գտնվում էյին ես-երների ու մենշևիկների կուսակցութեանների ձեռքում, վորոնք բոլի էյին կազմել բուրժուազիայի հետ: Սա բացատրվում է նրանով, վոր կոմկուսակցութեանն այն ժամանակ պատերազմի լիկվիդացիայի, անհապաղ դեմոկրատական հաշտութեան կողմնակից եր, մինչդեռ ես-երների ու մենշևիկների կուսակցութեանները պաշտպանում էյին «պատերազմը մինչև հաղթական վախճան», իմպերիալիստական պատերազմի շարունակումը: Սա բացատրվում է նրանով, վոր կոմկուսակցութեանն այն ժամանակ Կերենսկու կառավարութեան տապալման, բուրժուական իշխանութեան տապալման, Ֆաբրիկաների ու գործարանների, բանկերի ու յերկաթուղիների ազգայնացման կողմնակից եր, մինչդեռ մենշևիկների ու ես-երների կուսակցութեանները կռվում էյին հանուն Կերենսկու կառավարութեան ու պաշտպանում էյին բուրժուազիայի իրավունքները Ֆաբրիկաների ու գործարանների վերաբերմամբ, բանկերի ու յերկաթուղիների վերաբերմամբ: Սա բացատրվում է նրանով, վոր կոմունիստների կուսակցութեանն այն ժամանակ կողմնակից եր կալվածատիրական հողերի անհապաղ բռնագրավման հոգու ազդեցիկների, մինչդեռ ես-երների

ու մենչեիկները կուսակցություններն այդ հարցը հետաձգում եյին մինչև Սահմանադիր ժողովը, վորի գումարումը, իր հերթին, հետաձգում եյին անորոշ ժամանակով: Ել ինչ զարմանալու բան կա այստեղ, յեթե բանվորներն ու գյուղացիական չքավորությունը վերջապես ընտրություն կատարեցին հողուտ կոմունիստական կուսակցության: Ել ինչ զարմանալու բան կա այստեղ, յեթե ես-երների ու մենչեիկների կուսակցություններն այնպես արագ կերպով դեպի հատակն իջան: Ահա թե ինչն է պատճառը, վոր իշխանության գլուխ կոմունիստական կուսակցությունն անցավ:

Հետագա ժամանակաշրջանը, 1917 թվի հետհոկտեմբերյան ժամանակաշրջանը, քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանը մենչեիկների ու ես-երների վերջնական կործանման ժամանակաշրջանն էր, բոլշեիկների կուսակցության վերջնական հաղթանակի ժամանակաշրջանը: Մենչեիկներն ու ես-երներն իրենք հեշտացրին այդ ժամանակաշրջանում կոմկուսակցության հաղթանակը: Մենչեիկյան ու ես-երական կուսակցությունների բեկորները Հոկտեմբերյան հեղաշրջման ժամանակ ջախջախված ու հատակ իջեցված լինելով՝ սկսեցին կապվել կուլակների հակահեղափոխական ազատամբությունների հետ, բոլի կադմեցին կոլչակյանների ու դենիկինյանների հետ, ծառայելու գնացին Անտանտի մոտ և բանվորների ու գյուղացիների աչքում վերջնականապես թաղեցին իրենց: Այնպիսի պատկեր ստեղծվեց, վոր ես-երներն ու մենչեիկները, վորոնք բուրժուական հեղափոխականներն էին ըստ իրենց ինքնադրույթի, վորոնք ինքնադրույթով այն ամենը, ինչ կենդանի յեր ու հեղափոխական, բանվորների ու գյուղացիների ավելի ու ավելի նոր ջոկատներ էր վորքի հանում պայքարելու հանուն սոցիալիստական հայրենիքի, պայքարելու ընդդեմ Անտանտի: Միանգամայն բնական է, վոր կոմունիստների հաղթությունն այս ժամանակաշրջանում պետք է հասցներ ու իրոք հասցրեց ես-երների ու մենչեիկների լիակատար պարտությանը: Ել ինչ զարմանալու բան կա այստեղ, յեթե այս ամենից հետո կոմկուսակցությունը դարձավ բանվոր դասակարգի ու գյուղացիական չքավորության միակ կուսակցությունը:

Ահա թե ինչպես կադմավորվեց մեզանում կոմկուսակցու-

թյան՝ վորպես յերկրի միակ լեզու կուսակցության՝ մոնոպոլիան:

Պուր խոսում եք բանվորների ու գյուղացիների շրջանում տեղի ունեցող կարծիքների պայքարի մասին այժմ, պրոլետարական դեկտատուրայի պայմաններում: Յես արդեն ասացի, վոր կարծիքների պայքար կա և կլինի, վոր առանց դրան անհնարին է առաջ շարժվելը: Բայց կարծիքների պայքարը բանվորների շրջանում այժմյան պայմաններում ընթանում է վնչ թե խորհրդային կարգերի տապալման վերաբերյալ սկզբունքային հարցերի շուրջը, այլ խորհուրդների բարելավման, խորհրդային որդանների սխանների ուղղման գործնական հարցերի շուրջը, հետևաբար՝ խորհրդային իշխանության ամրացման շուրջը: Միանգամայն հասկանալի չէ, վոր կարծիքների ալդալիսի պայքարը կարող է միայն ամրապնդել ու կատարելագործել կոմունիստական կուսակցությանը: Միանգամայն հասկանալի չէ, վոր կարծիքների ալդալիսի պայքարը կարող է միմիայն ամրապնդել կոմկուսակցության մոնոպոլիան: Միանգամայն հասկանալի չէ, վոր կարծիքների ալդալիսի պայքարը չի կարող սնունդ տալ, վորպեսզի ուրիշ կուսակցություններ կադմավորվեն բանվոր դասակարգի ու աշխատավորական զյուղացիության ընդերքում:

5-րդ ՀԱՐՑ: Արդյո՞ք դուք կարո՞ղ եք համառոտակի հաղորդել մեզ ձեր և Տրոցկու միջև յեղած հիմնական տարակարծությունները:

ՊԱՏԱՍԽԱՆ: Ամենից առաջ յես պետք է ասեմ, վոր Տրոցկու հետ ունեցած տարակարծություններն անձնական տարակարծություններ չեն: Յեթե տարակարծություններն անձնական ընույթ կրեյին, կուսակցությունը վոչ մի ժամ չեր զբաղվի այդ գործով, վորովհետև նա չի սիրում, վոր առանձին անձեր ցայտադրվեն (выступают): Ակներև է, վոր խոսքը վերաբերում է կուսակցության մեջ յեղող տարաձայնություններին: Յես այսպես հասկացա այդ հարցը: Այո, այդ տարաձայնությունները գոյություն ունեն կուսակցության մեջ: Այդ տարաձայնությունների բնույթի մասին մոտ ժամանակներս բավական մանրամասն պատմեցին իրենց զեկուցումներում՝ ընկ. Ռիկովը—Մոսկվայում, ընկ. Բուխարինը—Լենինգրադում: Այդ զեկուցումները հրապարակված են: Այն ամենին, ինչ ասված է այդ զեկուցումներում տարաձայնությունների մասին, յես վոչինչ չունեմ ավե-

լացնելու: Յեթե դուք այդ դոկումենտները չունեք, յես կաբող եմ ճաշել զբանք ձեզ համար: (Պատվիրակությունը հաղորդում է, վոր ինքն ունի այդ դոկումենտները):

Պատվիրակներից մեկը: Մեր վերադարձին մեզ կհարցնեն այդ տարածաշրջանների մասին, բայց մենք չունենք բոլոր դոկումենտները: Որինակ, մենք չունենք «ՅՅ»-ի պլատֆորմը:

Ստալին: Յես այդ պլատֆորմը չեմ ստորագրել: Յես իրավունք չունեմ անորինություն անելու ուրիշների դոկումենտներին նկատմամբ: (Ծիծաղ):

6-րդ ՀԱՐՅ: Կապիտալիստական յեկիրներում տրտալությամբ զարգացման հիմնական մղումը հիմնված է ռազմային փառքի վրա: Այդ մղումը, ինտրին, հարաբերաբար, բացակայում է ԽՍՀՄ-ում: Ի՞նչն է փոխարինում դրան, և այդ փոխարինումը, ձեռ կարծիքով, վո՞րքան է օգնել: Արդյո՞ք մա կարո՞ղ է մնալում լինել:

ՊԱՏԱՍԽԱՆ: Այդ ճիշտ է, վոր կապիտալիստական անտեսություն հիմնական շարժիչը շահույթ քաղելն է: Ընդունե՛ք նախապես և այն, վոր շահույթ քաղելը մեր սոցիալիստական արդյունաբերությունն ինչ նպատակն է հանդիսանում, ինչ էլ շարժիչը: Ապա այդպիսի դեպքում լինչն է մեր ինդուստրիայի շարժիչը հանդիսանում:

Ամենից առաջ՝ այն հանգամանքը, վոր ֆաբրիկաներն ու գործարանները մեղանում պատկանում են ամբողջ ժողովրդին և վոչ թե կապիտալիստներին, վոր ֆաբրիկաներն ու գործարանները կառավարում են վոչ թե կապիտալիստների կամակատարները, այլ բանվոր դասակարգի ներկայացուցիչները: Այն բանի գիտակցությունը, վոր բանվորներն աշխատում են վոչ թե կապիտալիստի համար, այլ իրենց սեփական պետություն համար, իրենց սեփական դասակարգի համար, — այս գիտակցությունը հսկայական շարժիչ ուժ է հանդիսանում մեր արդյունաբերությունն զարգացման ու կատարելագործման գործում: Հարկավոր է նշել, վոր ֆաբրիկաների ու գործարանների գերեկտորների հրակայական մեծամասնությունը մեղանում բանվորներն են, վորոնց նշանակում է ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհուրդը՝ համաձայնեցնելով արհմիությունների հետ, ընդվորում գերեկտորներից վոչ մեկը չի կարող իր պոստում մնալ բանվորների կամ համապատասխան արհմիությունների կամքին հակառակ: Այնուհետև հարկ է նշել, վոր յուրաքանչյուր գործարանում կամ ֆաբրիկայում կա իր գործարանային կամ ֆաբրիկա-

յին կոմիտեն, վորին բանվորներն են ընտրում, և վորը վերահսկողության է յենթարկում ձեռնարկության ադմինիստրացիայի գործունեությունը: Հարկ է, վերջապես, նշել, վոր յուրաքանչյուր արդյունաբերական ձեռնարկության մեջ կան բանվորների արտադրական խորհրդակցություններ, ուր մտնում են տվյալ ձեռնարկության բոլոր բանվորները, և վորտեղ բանվորներն ստուգում են ձեռնարկության գերեկտորի ամբողջ աշխատանքը, քննարկում են գործարանի ադմինիստրացիայի աշխատանքի պլանը, նշում են սխալներն ու թերությունները և հնարավորություն ունենա՞յդ թերություններն ուղղելու արհմիությունների միջոցով, կուսակցության միջոցով, խորհրդային իշխանության որդանների միջոցով: Դժվար չէ հասկանալ, վոր բոլոր այս հանգամանքներն արմատապես փոխում են ինչպես բանվորների դրությունը, այնպես էլ կարգ ու կանոնը ձեռնարկության մեջ: Յեթե կապիտալիզմի որով բանվորը ֆաբրիկան գիտում է վորպես բանտ, ապա խորհրդային կարգերում բանվորը ֆաբրիկային՝ նայում է արդեն վոչ թե վորպես բանտի, այլ վորպես իր համար մոտիկ ու հարազատ մի բանի, վորի զարգացմամբ ու բարելավմամբ նա կենսականորեն շահագրգռված է: Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր բանվորների այս նոր վերաբերմունքը դեպի ձեռնարկությունը, բանվորների այս մոտեցությունն զգացմունքը դեպի ձեռնարկությունը, մեր ամբողջ արդյունաբերությունն մեծադույն շարժիչն է: Այս հանգամանքով պետք է բացատրել այն փաստը, վոր որեցոր աճում է արտադրության տեխնիկայի բնագավառի՝ այն դյուստարներին ու արդյունաբերության կազմակերպիչների քանակը, վորոնք դուրս են գալիս բանվորների միջից:

Յերկրորդ՝ այն հանգամանքը, վոր արդյունաբերությունից ստացվող յեկամուտները մեղանում գնում են վոչ թե առանձին անհատների հարստացման, այլ արդյունաբերության հետագա ընդլայնման համար, բանվոր դասակարգի նյութական ու կուլտուրական զրուության բարելավման համար, ինչպես բանվորներին, այնպես էլ դյուղացիներին անհրաժեշտ արդյունաբերական ապրանքների եժանացման, այսինքն դարձյալ աշխատավոր ժառանգների նյութական զրուության բարելավման համար: Կապիտալիստը չի կարող իր յեկամուտները հատկացնել բանվոր դասակարգի բարեկեցության բարձրացմանը: Նա շահույթների համար է ապրում: Այսպես նա կապիտալիստ չեր լինի: Նա շահույթներ է

քաղաքում, վորպեսզի դրանք դուստրի-դարձնի ավելադիր կապի-տալ և արտահանի ավելի նվազ զարգացած յերկիրները, վորոնք տառապում են կապիտալների պակասությունից, նոր, ել ավելի խոշոր շահույթներ քաղելու նպատակով: Այսպես կապիտալները Հյուսիսային Ամերիկայից հոսում են Չինաստան, Ինդոնեզիա, Հարավային Ամերիկա, Յեվրոպա, Ֆրանսիայից — Փրանսական գաղութները, Անգլիայից — անգլիական գաղութները: Մեզանում բանն այլ է, վորովհետև մենք գաղութային քաղաքականու-թյուն չենք վարում ու այդպիսին չենք ընդունում: Մեզանում արդյունաբերությունից ստացվող յեկամուտները մնում են յեր-կրում՝ ինդուստրիայի հետագա ընդլայնման գործի համար, բան-վորների դրության բարելավման գործի համար, արդյունաբերա-կան ապրանքների եծանացման միջոցով ներքին շուկայի, այդ թվում գյուղացիական շուկայի տարողությունը բարձրացնելու գործի համար: Արդյունաբերությունից ստացվող շահույթների 10 տոկ մեզանում գործադրվում է բանվոր դասակարգի կեն-ցադի բարելավման վրա: Բանվորների դրամական աշխատավար-ձի 13 տոկոսը մեզանում գործադրվում է բանվոր դասակարգին պետության հաշվին ապահովագրելու վրա (դա տարեկան 800 մի-լիոն ուղբուց ավելի յե կազմում): Յեկամուտների վորոշ մասը (յես հիմա չեմ կարող ասել — հատկապես վոր մասը) գործադր-վում է կուլտուրական կարիքների, Փաբլիկ-գործարանային աշակերտության ու բանվորների արձակուրդների վրա: Այդ յե-կամուտների բավական նշանակալի մասը (յես հիմա դարձյալ չեմ կարող ասել — հատկապես վոր մասը) գործադրվում է բանվորնե-րի զբոսական աշխատավարձի ամենամյա բարձրացման վրա: Արդյունաբերությունից ստացվող յեկամուտների մնացած մասը ծախսվում է արդյունաբերության հետագա ընդլայնման վրա, հին գործարանների նորոգման վրա, նոր գործարանների կառուց-ման վրա, վերջապես, արդյունաբերական ապրանքների եծա-նացման վրա: Այս հանգամանքների հսկայական նշանակություն-ը մեր ամբողջ արդյունաբերության համար այն է, վոր ա) նրանք հեշտացնում են գյուղատնտեսության մերձեցումն ին-դուստրիայի հետ և քաղաքի ու գյուղի միջև յեղած հակադրու-թյունների հարթումը. բ) նրանք նպաստում են ներքին — քաղա-քային ու գյուղական — շուկայի տարողության աճմանը՝ հենց դրանով ել անընդհատ աճող բազա ստեղծելով ինդուստրիայի հե-տագա ծավալման համար:

Վերջապես՝ այն հանգամանքը, վոր արդյունաբերության ազգայնացման փաստը հեշտացնում է ի մի առած ամբողջ ար-դյունաբերական տնտեսության պլանային վարումը:

Մեր արդյունաբերության այս ազգականներն ու շարժիչները մշտական գործոններ կլինեն արդյոք: Արդյոք նրանք կարճ են մշտապես գործող ֆակտորներ լինել: Այո, նրանք անպայման կլինեն մշտապես գործող ազգականներ ու շարժիչներ: Յեվ վորքան ավելի զարգանա մեր ինդուստրիան, այնքան ավելի յեն աճելու այդ գործոնների ուժն ու նշանակությունը:

7-րդ ՀԱՐՅ: ԽՍՀՄ-ն ի՞նչ չափով կտրող է համագործակցել այլ յերկիրների կապիտալիստական արդյունաբերության հետ: Կա՞ արդյոք վորոշ սահման այդպիսի համագործակցության համար, թե՞ դա սուկ մի փորձ է՝ պարզելու համար, թե վո՞ր մասում ինչ-պիսի համագործակցություն է հնարավոր և վո՞ր մասում՝ վոչ:

ՊԱՏԵՍԽԱՆ: Խոսքը, յերևի, վերաբերում է կապիտալիստա-կան պետությունների հետ արդյունաբերության բնագավառում, առևտրի բնագավառում և, գուցե, դիվանագիտական հարաբերու-թյունների բնագավառում ժամանակավոր համաձայնություններ կնքելուն: Յես կարծում եմ, վոր յերկու հակադիր սխտեմներ — կապիտալիստական սխտեմի և ԽՍՀՄ-ի կապիտալիստական սխտեմի — առ-կայությունը չի բացառում այդպիսի համաձայնությունների հնարավորությունը: Յես կարծում եմ, վոր այդպիսի համաձայնու-թյունները հնարավոր ու նպատակահարմար են խաղաղ զարգաց-ման պայմաններում: Արտահանությունն ու ներմուծումն ամե-նահարմար հողն են այդպիսի համաձայնությունների համար: Մեզ հարկավոր են՝ տաքավորում, հումք (որինակ՝ բամբակ), կիսաֆաբրիկատներ (մետաղի և այլն), իսկ կապիտալիստներն այդ ապրանքների վաճառահանման կարիք ունեն: Ահա ձեզ հա-մաձայնության հող: Կապիտալիստներին հարկավոր են՝ նավթ, փայտեղեն, հացամթերքներ, իսկ մեզ անհրաժեշտ է վաճառա-հանել այդ ապրանքները: Ահա ձեզ համաձայնության համար դարձյալ մի հող: Մեզ վարկեր են հարկավոր, կապիտալիստներին հարկավոր են լավ տոկոսներ այդ վարկերի համար: Ահա ձեզ ելի մեկ հող համաձայնության համար՝ արդեն վարկի գծով, ընդ-վորում հայտնի յե, վոր խորհրդային որգանները վարկերի վե-րաբերմամբ ամենաճշտապահ՝ վճարողներն են:

Նույն այդ բանը կարելի յե ասել դիվանագիտական բնագա-ւառում:

վառի մասին: Մենք խաղաղության քաղաքականություն ենք վարում և մենք պատրաստ ենք փոխադարձ հարձակման պակտեր ստորագրելու բուրժուական պետությունների հետ: Մենք խաղաղություն քաղաքականություն ենք վարում և մենք պատրաստ ենք զենաթափման վերաբերյալ համաձայնություն գրելու: Ընդհուպ մինչև մշտական բանակների լրակատար վոչնչացումը, վորի մասին մենք ամբողջ աշխարհի առաջ հայտարարել ենք դեռևս Շենսիայի կոնֆերենցիայում: Ահա ձեզ հող դիվանագիտական դժով համաձայնություն համար:

Այդ համաձայնությունների սահմանները: Սահմանները գրվում են յերկու սխտեմների հակադրությամբ, — սխտեմներ, վորոնց միջև տեղի չեն ունենում մրցակցություն, պայքար: Այն շրջանակներում, վոր այդ յերկու սխտեմներն են թույլ տալիս, բայց միայն այդ շրջանակներում, համաձայնությունները լիովին հնարավոր են: Այդ մասին ե խոսում Գերմանիայի, Իտալիայի, Ճապոնիայի և այլոց հետ կնքած համաձայնությունների փորձը:

Արդյոք այդ համաձայնությունները սոսկ եքսպերիմենտ են, թե նրանք կարող են ունենալ ավելի կամ պակաս յերկարատե բնույթ: Դա կախված ե վոչ միայն մեղանից, դա կախված ե նույնպես մեր կոնսրահենտներից: Դա կախված ե ընդհանուր իրավրությունից: Պատերազմը կարող ե գլխիվայր շուտ տալ բոլոր ու ամեն տեսակի համաձայնությունները: Դա կախված ե, վերջապես, համաձայնության պայմաններից: Ստրկական պայմաններ մենք չենք կարող ընդունել: Մենք համաձայնություն ունենք Հարրիմանի հետ, վորը շահագործում ե մանգանի հանքերը Վրաստանում: Համաձայնությունը կնքված ե 20 տարով: Ինչպես տեսնում եք, բոլորովին ել վորք ժամանակ չե: Մենք համաձայնություն ունենք նույնպես Լենա-Գոլդֆելդս ընկերության հետ, վորը վոսկի յե արդյունահանում Սիբիրում: Համաձայնությունը կնքված ե 30 տարով, — ել ավելի յերկարատե մի ժամկետով: Վերջապես, համաձայնություն կա Ճապոնիայի հետ՝ Սախալինում նավթադրոներ ու անթանանքեր շահագործելու վերաբերյալ:

Մենք կցանկանայինք, վոր այս համաձայնություններն ունենան քիչ թե շատ հաստատուն բնույթ: Բայց այդ կախված ե, իհարկե, վոչ միայն մեղանից, այլև մեր կոնսրահենտներից:

8-րդ ՀԱՐՑ: Վորո՞նք են Ռուսաստանի հիմնական ցարքերությունները կապիտալիստական պետություններից այն քաղաքականու-

թյան մեջ, վոր նա վարում ե ազգային փոքրամասնությունների նկատմամբ:

ՊԱՏԱՍԽԱՆ: Խոսքը, յերևի, վերաբերում ե ԽՍՀՄ-ի այն ազգություններին, վորոնց առաջներում ցարիզմն ու ռուսական շահագործող դասակարգերը կեղեքում եյին, և վորոնք չունեյին իրենց պետականությունը: Հիմնական տարբերությունն այն ե, վոր կապիտալիստական պետություններում գոյություն ունեն ազգային ճնշում ու ազգային ստրկացում, իսկ մեղանում, ԽՍՀՄ-ում, արմատապես վոչնչացված են թե մեկը, թե մյուսը: Այնտեղ, կապիտալիստական պետություններում, առաջին կաթիլի ազգերի, արտոնյալ ազգերի, «պետական» ազգերի կողքին գոյություն ունեն յերկրորդ կարգի ազգեր, «վոչ-պետական» ազգեր, վոչ-լիբերալ ազգեր, վորոնք զրկված են այս կամ այն իրավունքներից և, ամենից առաջ, պետական իրավունքներից: Մեղանում, ԽՍՀՄ-ում, ընդհանուրապես, վոչնչացված են ազգային անհավասարության և ազգային ճնշման բոլոր այդ ատրիբուտները: Մեղանում բոլոր ազգերն իրավահավասար են ու սուվերեն, վորովհետեւ առաջներում տիրապետող վերիկուռուս ազգի ազգային ու պետական արտոնությունները վոչնչացված են: Բանն, իհարկե, չի վերաբերում ազգությունների հավասարության վերաբերյալ զեկլարացիաներին: Ազգային հավասարության վերաբերյալ զեկլարացիաներ քիչ չունեն ամեն տեսակի բուրժուական ու սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները: Խնչ արժեք ունեն դեկլարացիաները, յիթե նրանք չեն կիրառվում կյանքում: Բանն այն ե, վոր վոչնչացնենք այն դասակարգերը, վորոնք ազգային ճնշման կրողները, ստեղծիչներն ու կիթառողներն են: Այդպիսի դասակարգեր եյին մեզ մոտ կալվածատերերը, կապիտալիստները: Մենք տապալեցինք այդ դասակարգերին և հենց դրանով վոչնչացրինք ազգային ճնշման հնարավորությունը: Յեւ իհնց այն պատճառով, վոր մենք տապալեցինք այդ դասակարգերին, իսկական ազգային հավասարությունը մեզ մոտ հնարավոր դարձավ: Հենց այս ե, վոր մեղանում կոչվում ե ազգությունների ինքնորոշման դադափարի իրականացումն ընդհուպ մինչև անշատումը: Հենց այն պատճառով, վոր մենք իրականացրել ենք ազգությունների ինքնորոշումը, հենց այդ պատճառով ել մեզ հաջողվեց դուրս վանել ԽՍՀՄ-ի տարբեր ազգությունների աշխատավոր մասսաների փոխադարձ անվստահությունը, և ազգությունները կամավորության հիմունքներով միավորել վորպես մի միութենական պետություն:

Ներկայումս գոյություն ունեցող Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը մեր ազգային քաղաքականության արդյունքն է և այն բանի արտահայտությունը, վոր ԽՍՀՄ-ի ազգությունները հոժարակամ կերպով ֆեդերացիա չեն կազմել վորպես մի միութենական պետություն: Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր այսպիսի քաղաքականությունն ազգային հարցում անհրեակայելի չէ կապիտալիստական յերկրներում, վորովհետև այնտեղ դեռևս իշխանություն գլուխ են կանգնած կապիտալիստները, վորոնք ազգային ճնշման քաղաքականություն ստեղծիչներն ու կիրառողներն են: Չի կարելի չնշել, որինակ, այն փաստը, վոր ԽՍՀՄ-ի բարձրագույն որդանի, — Խորհուրդների Կենտրոնական գործադիր կոմիտեյի, — գլուխ է կանգնած վնչ թե պարտավորապես ռուս նախագահ, այլ վեց նախագահներ՝ ԽՍՀՄ-ի մեջ միավորված վեց միութենական հանրապետություններ թվի համաձայն, վորոնցից մեկը ռուս է (Կալինին), մյուսը ռեբրանցի (Պետրովսկի), յերրորդը — բելոռուս (Չերվյակով), չորրորդը — ադրբեջանցի (Մուսաբեկով), հինգերորդը — թուրքմեն (Այթակով), վեցերորդը — ռզբեկ (Փայգուլյա Սոջայեվ): Այս փաստը մեր ազգային քաղաքականության պայծառ արտահայտություններից մեկն է: Ինչ ասել կուզի, վոր վոչ մի բուրժուական հանրապետություն, թեկուզ նա ամենադեմոկրատականը լինի, այսպիսի քայլ չի դիմի: Մինչդեռ այս քայլը մեզ համար ինքնին հասկանալի մի փաստ է, վորը բղիում է ազգային հասարակության մեր ամբողջ քաղաքականությունից:

9-րդ ՀԱՐՑ: Ամերիկյան բազմութան առաջնորդներն իրենց պայքար կոմունիստների դեմ արդարացում են յերկու հանգամանակով: 1) կոմունիստները փայայում են բանվորական շարժումը իրենց ֆրակցիոն պայքարով՝ միությունների ներսում և իրենց հարձակումներով վոչ-նադիկալ պոստնոստո անձերի վրա՝ արհմիություններում: 2) ամերիկյան կոմունիստները կարգադրություններն ստանում են Մոսկվայից և այս պատճառով չեն կարող արհմիութենական լավ գործիչներ լինել, վառչափով վո՞ւր մեանց լոյալությունը օտարերկրյա կազմակերպության նկատմամբ գերազանցում է իրենց միության նկատմամբ ունեցած մեանց լոյալությունից: Այս դժվարությունն ի՞նչպես կտրուկ է վերացվել, վառչափով ամերիկյան կոմունիստները կարողանային միասեղ աշխատանք կատարել ամերիկյան բանվորական շարժման մյուս բջիջների հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ: Յես կարծում եմ, վոր ամերիկյան բանվորական լիգերներն այն փորձը, վոր նրանք անում են կոմունիստներին դեմ մղած իրենց պայքարն արդարացնելու համար, վոչ մի քննադատության չի դիմանում: Դեռ վոչ վոք չի ապացուցել ու չի ապացուցի, վոր կոմունիստները քայքայում են բանվորական շարժումը: Բայց դրա փոխարեն հարկավոր է լիովին ապացուցված համարել, վոր կոմունիստները բանվորական շարժման ամենանվիրված ու ամենախիղախ մարտիկներն են ամբողջ աշխարհում, այդ թվում նաև Ամերիկայում: Միթե սա փաստ չէ, վոր բանվորներին գործադուլների ու ցույցերի ժամանակ կոմունիստներն ընթանում են բանվոր դասակարգի առաջին շարքերում՝ իրենց վրա ընդունելով կապիտալիստների առաջին հարվածները, մինչդեռ ռեֆորմիստական բանվորական լիգերներն այդ ժամանակ թագնվում են կապիտալիստների հետնադակերում (на задворках): Կոմունիստներն ի՞նչպես կարող են չքննադատել ռեֆորմիստական բանվորական լիգերների վախկոտությունն ու հետադիմականությունը: Միթե պարզ չէ, վոր այդպիսի քննադատությունը կարող է միայն աշխուժացնել ու ամրացնել բանվորական շարժումը: Չձմարիտ է, այդպիսի քննադատությունը կործանում է հետագեմ բանվորական լիգերների հեղինակությունը: Ե՛, այստեղ առանձին ինչ բան կա վոր: Բանվորական հետագեմ լիգերները թող պատասխանեն հակաքննադատությանը, և վոչ թե կոմունիստներին արհմիություններից դուրս վոնդելով: Յես կարծում եմ, վոր Ամերիկայի բանվորական շարժումը, յեթե նա ցանկանում է ապրել ու ալելի զարգանալ, չի կարող յուր գնալ առանց կարծիքների ու հոսանքների պայքարի՝ արհմիությունների ներսում: Յես կարծում եմ, վոր արհմիությունների ներսում կարծիքների ու հոսանքների պայքարը, հետագեմ լիգերներին քննադատելը և այն գնալով ալելի ու ալելի կաճեն, ինչպես ել վոր դիմադրեն դրան ռեֆորմիստական բանվորական լիգերները: Իսկ Ամերիկայի բանվոր դասակարգին բացարձակապես անհրաժեշտ է կարծիքների այդպիսի պայքարն ու այդպիսի քննադատությունը, վորպեսզի նա կարողանա տարբեր հոսանքների միջև ընտրություն կատարել ու վերջապես ինքնորոշվել վորպես ինքնուրույն կազմակերպված ուժ ամերիկյան հասարակության ներսում: Ամերիկյան ռեֆորմիստական լիգերների գանգատները կոմունիստներին դեմ լոկ այն են վկայում, վոր նրանք համոզված չեն իրենց արդարացի լինելուն, իրենց դրությունն ամուր չեն զգում: Հենց

այս պատճառով ե, վոր նրանք քննադատությունից վտխեանում են՝ ինչպես ժանտախտից: Ուշագրավ ե, վոր ամերիկյան բանվորական լիգերները տարրական դեմոկրատիայի ավելի վճռական հակառակորդներ են, քան շատ բուրժուաներ հենց նույն Ամերիկայում:

Միանգամայն սխալ ե այն պնդումը, թե ամերիկյան կոմունիստներն աշխատում են «Մոսկվայից յեկող կարգադրության համաձայն»: Աշխարհում դուք չեք գտնի այնպիսի կոմունիստներ, վորոնք համաձայնեցին գործել դրսից յեկող «կարգադրությունների համաձայն», իրենց համոզմունքների դեմ, իրենց կամքի դեմ, իրադրության ցուցումների հակառակ: Բայց այդպիսի կոմունիստները, յեթե նրանք նույնիսկ վորևե տեղ գոյություն ունենային, գոռոջ անգամ չեյին արժենա: Կոմունիստներն ամենահամարձակ ու խիզախ մարդիկ են, նրանք կռիվ են մղում մի ամբողջ ծով թշնամիների դեմ: Կոմունիստների արժեքն, ի միջի այլոց, հենց այն ե, վոր նրանք կարողանում են իրենց համոզմունքները պաշտպանել: Այս պատճառով տարրինակ ե ամերիկյան կոմունիստների մասին խոսել իբրև այնպիսի մարդկանց մասին, վորոնք իրենց համոզմունքները չունեն ե ընդունակ են գործելու միայն դրսից արվող «կարգադրություններով»: Բանվորական լիգերների պնդումի մեջ ճիշտ ե միայն մի բան — հենց այն, վոր ամերիկյան կոմունիստները մտնում են կոմունիստների միջազգային կազմակերպության մեջ ե ժամանակ առ ժամանակ խորհրդակցում են այդ կազմակերպության կենտրոնի հետ այս կամ այն հարցերի շուրջը: Բայց այստեղ ի՞նչ վատ բան կա: Մի՞թե ամերիկյան բանվորական լիգերները դեմ են միջազգային բանվորական կենտրոն կազմակերպելուն: Ճիշտ ե, նրանք Ամատերդամի կազմի մեջ չեն մտնում: Բայց նրանք այնտեղ չեն մտնում վո՞չ թե այն պատճառով, վոր նրանք միջազգային բանվորական կենտրոնին դեմ են, այլ այն պատճառով, վոր նրանք Ամատերդամը չափազանց ձախ կազմակերպություն են համարում: (Միծաղ): Ինչ՞ա կապիտալիստները կարող են միջազգային մասշտաբով կազմակերպվել, իսկ բանվոր դասակարգը կամ բանվոր դասակարգի մի մասը չպետք ե ունենան իրենց միջազգային կազմակերպությունը: Պարզ չե՞ արդյոք, վոր Գերին ու Նրա բարեկամներն Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիայից՝ զրպարտում են ամերիկյան կոմունիստներին՝ ստրկորեն կրկնելով կապիտալիստների լեզենդաները «Մոսկվայից յեկող կարգադրու-

թյունները» մասին: Կան մարդիկ, վորոնք կարծում են, թե Կոմունիստական Ինտերնացիոնալի անդամները Մոսկվայում բան ու գործ են շինել միայն այն, վոր նստել են ու գիրեկտիվներ են գրում բոլոր յերկիրների համար: Քանի վոր Կոմիտեներն կազմի մեջ մտնող յերկիրների քանակը 60-ից ավելի յե, ապա կարող եք պատկերացնել ձեզ Կոմիտեների անդամների դրությունը, վորոնք չեն քնում, չեն ուտում ե միայն բան ու գործերն այն ե, վոր նստել են ու գրելը-ցերեկ գիրեկտիվներ են գրում այդ յերկիրների համար: (Միծաղ): Յե՛վ ամերիկյան բանվորական լիգերները մտածում են այս զվարճալի լեզենդայով քողարկել իրենց ահը կոմունիստների հանդեպ ու սքողել այն փաստը, վոր կոմունիստներն Ամերիկայի բանվոր դասակարգի ամենահամարձակ ու ամենանվիրված աշխատողներն են:

Պատվիրակությունը հարցնում ե, թե վո՞րն ե յեղքն այսպիսի դրությունից: Յե՛ս կարծում եմ, վոր այստեղ մեկ յեղք կա. թույլատրել կարծիքների ու հոսանքների պայքարն Ամերիկայի արհմիությունների ներսում, դեն գցել կոմունիստներին արհմիություններից դուրս նետելու հետադեմ քաղաքականությունը ե Ամերիկայի բանվոր դասակարգին հնարավորություն տալ այդ հոսանքների միջև ազատ ընտրություն անելու, վորովհետեւ Ամերիկայում դեռ իրենց Հոկտեմբերյան հեղափոխությունը չի յեղել, ե այնտեղ բանվորները դեռևս հնարավորություն չեն ունեցել վերջնական ընտրություն անելու տարբեր հոսանքների միջև արհմիություններում:

10-րդ ՀԱՐՑ: Արդյո՞ք ներկայումս դրամ ուղարկվում ե Ամերիկա՝ ամերիկյան կոմկուսակցությանը կամ «Ինչի Ուսուցիչ» կոմունիստական լրագրին աջակցելու համար: Յեքե՛ վոչ, ամերիկյան կոմունիստները տարեկան վո՞րեան անդամավճարներ են մուծում III Ինտերնացիոնալ:

ՊԱՏԱՍԽԱՆ: Յեթե խոսքը վերաբերում ե Ամերիկայի կոմկուսակցության ե III Ինտերնացիոնալի փոխհարաբերություններին, ապա յես պետք ե ասեմ, վոր Ամերիկայի կոմկուսակցությունը, վորպես Կոմունիստական Ինտերնացիոնալի մի մասը, հավանորեն անդամակցական մուծումներ ե վճարում Կոմիտեներին, այնպես, ինչպես վոր Կոմիտեները, վորպես միջազգային կոմունիստական շարժման կենտրոն, պետք ե կարծել, ուժերը ներածին չափով աջակցություն ե ցույց տալիս Ամերիկայի կոմ-

կուսակցութեանը, յերբ այդ անհրաժեշտ է գտնուի: Յեա կարծուի եմ, վոր սրանում դարմանալի ու արտասովոր վոչինչ չկա: Իսկ յեթե խոսքը վերաբերում է Ամերիկայի կոմկուսակցութեան և ԽՍՀՄ-ի կոմկուսակցութեան փոխհարաբերութիւններին, ապա յես պետք է հայտարարեմ, վոր յես չգիտեմ վոչ մի դեպք, յերբ ամերիկայան կոմկուսակցութեան ներկայացուցիչներն ողնութեան համար դիմած լինեն ԽՍՀՄ-ի կոմկուսակցութեանը: Դուք կարող եք այս տարրինակ համարել, բայց սա մի փաստ է, վորը խոսում է ամերիկայան կոմունիստների չափազանց մեծ նրբանկատութեան մասին: Բայց ի՞նչ կլինեն, յեթե Ամերիկայի կոմկուսակցութեանը ողնութեան համար դիմելը ԽՍՀՄ-ի կոմկուսակցութեանը: Յես կարծուի եմ, վոր ԽՍՀՄ-ի կոմկուսակցութեանը իր ուժերը ներածի չափ ողնութեան ցույց կտար նրան: Իրոք, ի՞նչ արժեք կունենար այն կոմկուսակցութեանը, այն ել իշխանութեան գլուխ կանգնած կոմկուսակցութեանը, յեթե նա իր ուժերի ներածի չափ ողնութեանը մերժել կապիտալիզմի լծի տակ գտնվող՝ ուրիշ յերկրի կոմկուսակցութեանը: Յես կասեյի, վոր այդպիսի կոմկուսակցութեանը գոռոջ անգամ չեր արժենա: Յենթադրենք, թե ամերիկայան բանվոր դասակարգը, իր բուրժուազիային տապալելով, իշխանութեան հասավ. յենթադրենք, թե Ամերիկայի բանվոր դասակարգին, վոր հաղթել է կապիտալիզմի դեմ մղած մեծ պայքարում, նրա ուժերի ներածի չափ նյութական ողնութեան է դիմում մի այլ յերկրի բանվոր դասակարգը, — արդոք ամերիկայան բանվոր դասակարգը կկարողանար այդպիսի ողնութեանը մերժել: Յես կարծուի եմ, վոր նա իրեն խայտառակութեան կմատներ, յեթե տատանվեր ողնութեան ցույց տալու:

11-րդ ՀԱՐՑ: Մենք գիտեմք, վոր վորոք լավ կոմունիստներ այնքան ել համաձայն չեն կոմկուսակցութեան այն պահանջին, վոր բոլոր նոր անդամներն անասվածներ լինեն, վորովհետեւ ներկայումս հետադիմ հոգևորականությունը ճնշված է: Կոմկուսակցությունը կտադ կլինե՞ր արդոք տպագայում չեզոք լինել կրոնի նկատմամբ, վորն աջակցելիս լինել ամբողջությամբ վերցրած բովանդակ գիտությունն ու դիմակայելիս չլինել կոմունիզմին: Դուք կտադ կլինեյի՞ր արդոք տպագայում բուլլասեել կուսակցութեան անդամներին կրոնական համոզմունքներ դավանել, յեթե այդ համոզմունքները տարբերաց չլինեյին կուսակցական լոյալութեան հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ: Այս հարցում միջանի անձառութիւնն է: Նախ, յես չգիտեմ այնպիսի «լավ կոմունիստներ», վորոնց մասին այստեղ խոսում է պատվիրակութեանը: Հաղով թե առհասարակ այդպիսի կոմունիստներ գոյութեան ունենան ընդթյան մեջ: Յերկրորդ, յես պետք է հայտարարեմ, վոր, ֆորմալ կերպով ասած, մեզանում չկան կուսակցութեան անդամ ընդունելու այնպիսի պայմաններ, վորոնք կուսակցութեան անդամութեան թեկնածուից պարտադիր անաստվածութեան պահանջներն: Կուսակցութեան մեջ ընդունելու մեր պայմաններն են՝ ընդունել կուսակցութեան ծրագիրն ու կանոնադրութեանը, անպայման յենթարկվել կուսակցութեան ու նրա որդանների վճիռներին, անգամավճարներ տալ, մտնել կուսակցութեան կազմակերպութեան ներքից վորեւ մեկի մեջ:

Պատվիրակներից մեկը: Յես շատ հաճախ եմ կարդում, վոր կուսակցութեանից վտարում են աստծուն հավատալու համար:

Ստալին: Յես կարող եմ միայն կրկնել կուսակցութեան մեջ ընդունելու պայմանների մասին արդեն ասածը: Ուրիշ պայմաններ մենք չունենք:

Այդ նշանակում է արդոք, վոր կուսակցութեանը կրոնի նկատմամբ չեզոք է: Վնչ, չի նշանակում: Մենք պրոպագանդա յենք մղում ու պրոպագանդա յենք մղելու կրոնական նախապաշարմունքների դեմ: Յերկրի որեւորութեանն այնպես է, վոր ամեն մի քաղաքացի իրավունք ունի դավանելու ցանկացած կրոն: Դա յուրաքանչյուրի խղճի գործն է: Հենց այս պատճառով է, վոր մենք կիրառել ենք յեկեղեցու բաժանումը պետութեանից: Բայց կիրառելով յեկեղեցու բաժանումը պետութեանից ու դավանանքի ազատութեան հռչակելով՝ մենք դրա հետ մեկտեղ յուրաքանչյուր քաղաքացու իրավունք ենք վերադառնել համոզելու միջոցով, պրոպագանդայի ու ագիտացիայի միջոցով պայքարելու այս կամ այն կրոնի դեմ, ամեն մի կրոնի դեմ: Կուսակցութեանը չի կարող չեզոք լինել կրոնի նկատմամբ և նա հակակրոնական պրոպագանդա յե մղում բոլոր ու ամեն տեսակ կրոնական նախապաշարմունքների դեմ, վորովհետեւ նա գիտութեանն է կողմնակից, իսկ կրոնական նախապաշարմունքները գիտութեան դեմ են դնում, վորովհետեւ յուրաքանչյուր կրոն գիտութեանը հակադիր մի բան է: Այնպիսի դեպքեր, ինչպես Ամերիկայումս է, վորտեղ մոտ ժամանակներս դարձինա-

կաններին դատապարտեցին, մեղանում անհնարին են, վորովհետեւ կուսակցութիւնը վարում է գիտութիւնն ամեն կերպ պաշտպանելու քաղաքականութիւն: Կուսակցութիւնը չի կարող չհեղձ լինել կրօնական նախապաշարմունքների նկատմամբ և նա պրոպագանդա յի մղելու այդ նախապաշարմունքներին դեմ, վորովհետեւ դա շահագործող դասակարգերին աջակցող և այդ դասակարգերի նկատմամբ հնազանդութիւն քարոզող հետադեմ հոգևորականութիւնն ազդեցութիւնը խախտելու ճիշտ միջոցներից մեկն է: Կուսակցութիւնը չի կարող չհեղձ լինել կրօնական նախապաշարմունքներ կրողների նկատմամբ, աշխատավոր մասսաների գիտակցութիւնը թունավորող հետադեմ հոգևորականութիւնն աջակցող: Այո, ճնշել ենք: Դժբախտութիւնն այն է միայն, վոր նա դեռ լիովին լիկվիդացիայի յենթարկված չէ: Հակախրոնական պրոպագանդան այն միջոցն է, վորը պետք է մինչև վերջը հասցնի հետադիմական հոգևորականութիւնը լիկվիդացիայի յենթարկելու գործը: Լինում են դեպքեր, վոր կուսակցութիւնն անդամներից վոմանք յերբեմն խանդարում են հակակրօնական պրոպագանդան ամեն կերպ ծավալվելուն: Յեթե կուսակցութիւնն այսպիսի անդամներին վտարում են, ապա այդ շատ լավ է, վորովհետեւ այդպիսի «կոմունիստները» մեր կուսակցութիւնն շարքերում տեղ չունեն:

12-րդ ՀԱՐՑ: Դուք կարո՞ղ եմ արդո՞ւք համառոտակի տալ մեզ տպագրաւ տյն հասարակության բնութագիրը, վոր փորձում է սեղծել կոմունիզմը:

ՊԱՏԱՍԽԱՆ: Կոմունիստական հասարակութիւնն ընդհանուր բնութագիրը տրված է Մարքսի, Ենգելսի ու Լենինի աշխատութիւններում: Յեթե համառոտակի տանք կոմունիստական հասարակութիւնն անատոմիան, ապա դա կլինի այնպիսի հասարակութիւն, ա) վորտեղ արտադրութիւնն գործիքների ու միջոցների մասնավոր սեփականութիւն չի լինի, այլ կլինի հասարակական, կոլեկտիվ սեփականութիւն: բ) վորտեղ չեն լինի դասակարգեր ու պետական իշխանութիւն, այլ կլինեն ինքուստրիայի ու գյուղատնտեսութիւնն աշխատավորներ, վորոնք տնտեսապիս կառավարվեն վորպես աշխատավորների ազատ ասոցիացիա: գ) վորտեղ պլանով կազմակերպված ժողովրդական տնտեսու-

թիւնը կխարսխվի բարձրագոյն տեխնիկայի վրա՝ ինչպես ինգուստրիայի բնագավառում, այնպես էլ գյուղատնտեսութիւնն ընդգրկւում: դ) վորտեղ քաղաքի ու գյուղի միջև, ինգուստրիայի ու գյուղատնտեսութիւնն միջև հակադրութիւն չի լինի: ե) վորտեղ միջերկրները կբաշխվեն ֆրանսական հին կոմունիստներին սկզբունքով՝ «յուրաքանչյուրից ըստ իր ընդունակութիւնների, յուրաքանչյուրին ըստ իր պահանջմունքների»: զ) վորտեղ գիտութիւնն ու արվեստը լիակատար ծաղկման հասնելու համար բավականաչափ բարենպաստ պայմաններ կվայելեն: է) վորտեղ անհատը ազատ լինելով մի կտոր հացի հոգսերից ու «աշխարհի ուժեղներին» հարմարվելու անհրաժեշտութիւնից՝ իսկապես ազատ կլինի: Յեւ այլն և այլն: Պարզ է, վոր մենք դեռ հեռու յենք այսպիսի հասարակութիւնից:

Ինչ վերաբերում է կոմունիստական հասարակութիւնն լիակատար հաղթանակի համար անհրաժեշտ միջազգային պայմաններին, ապա դրանք կգոյանան ու կաճեն՝ կապիտալիստական յերկիրներում հեղափոխական ճգնաժամերի ու բանվոր դասակարգի հեղափոխական պոռթկումների ւճամանը զուգընթաց: Զի կարելի է բանն այնպես պատկերացնել, վոր մի յերկրի կամ մի քանի յերկիրների բանվոր դասակարգը կընթանա դեպի սոցիալիզմ և մանավանդ դեպի կոմունիզմ, իսկ մյուս յերկիրների կապիտալիստներն անտարբեր կնայեն դրան ու ձեռքները ծալած կնստեն: Առավել էս չի կարելի պատկերացնել, վոր բանվոր դասակարգը կապիտալիստական յերկիրներում կհամաձայնի լինել այս կամ այն յերկրում սոցիալիզմի հաղթական զարգացման սոսկ դիտողը: Իրոք կապիտալիստները կանեն իրենցից կախված ամեն բան, վորպեսզի խեղդեն այդպիսի յերկիրներին: Իրոք յուրաքանչյուր յուրջ քայլին դեպի սոցիալիզմը և մանավանդ դեպի կոմունիզմն այս կամ այն յերկրում անխուսափելիորեն ուղեկցելու յի կապիտալիստական յերկիրների բանվոր դասակարգի անգուսպ խոյանքը՝ դիկտատուրա ու սոցիալիզմ նվաճելու այդ յերկիրներում: Այսպիսով միջազգային հեղափոխութիւնն հետագա զարգացման ընթացքում կկազմավորվի համաշխարհային մասշտաբի յերկու կենտրոն. սոցիալիստական կենտրոն, վորը դեպի ինքն է ձգում սոցիալիզմին ձգտող յերկիրները, և կապիտալիստական կենտրոն, վորը դեպի ինքն է ձգում կապիտալիզմին ձգտող յերկիրները: Այդ յերկու կենտրոնի կռիվը համաշ-

խարհային տնտեսութեանը տիրանալու համար՝ վճռելու յե կապիտալիզմի և կոմունիզմի բախտն ամբողջ աշխարհում: Վերջին հետե համաշխարհային կապիտալիզմի վերջնական պարտութունը սոցիալիզմի հաղթութունն և համաշխարհային տնտեսութեան անպարեզում:

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ՀԱՐՑԵՐԸ ՅԵՎ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Աստիճան: Յեթե պատվիրակութիւնը շատ չի հոգնել, ապա յես թույլտուութիւն կխնդրեյի իմ հերթին նրան մի քանի հարց տալու (Պատվիրակութիւնը հայցնում է իր համաձայնութիւնը):

1-ին ՀԱՐՑ: Ինչո՞ւ է բացատրւում բանվորների արհեստագետ կամ կազմակերպվածութեան փոքր տեղում Ամերիկայում: Կարծեմ այնտեղ 17 միլիոն ինքուստրիալ բանվոր կա: (Պատվիրակները տեղեկանք են տալիս, վոր 18-ից մինչև 19 միլիոն ինքուստրիալ բանվոր կա): Կազմակերպված է կարծեմ մոտ 3 միլիոն: (Պատվիրակները տեղեկանք են տալիս, վոր Առևտրային Ամերիկայի Ֆեդերացիայում հաշվւում է մոտավորապես 3 միլիոն կազմակերպված բանվոր և, բացի դրանից, այլ միութեաններում կա կես միլիոն կազմակերպված բանվոր, այդպիսով ընդամենը կա $3\frac{1}{2}$ միլիոն կազմակերպված բանվոր): Յես անձամբ դանում եմ, վոր սա արհմիութիւններում կազմակերպված բանվորների շատ փոքր տոկոս է: Մեղանում, ի՞նչո՞ւ արհմիութիւններում կազմակերպված է յերկրի բոլոր պրոլետարների 90 տոկոսը: Յես ուզում եյի հարցնել պատվիրակութիւնից, արդյոք նա դրական փաստ է համարում բանվորների այս համեմատաբար քիչ կազմակերպված լինելն արհմիութիւններում: Պատվիրակութիւնը չի՞ կարծում արդյոք, վոր այս փաստ խոսում է ամերիկայի պրոլետարիատի բաւարարում մասին, կապիտալիստների դեմ տեսնակամ բնագավառում պայքարելու նրա գործիքների բաւարարում մասին:

Բերքի: Արհեստակցական միութիւնները փոքրաթիւ լինելը հարկավոր է բացատրել վնչ թե արհեստակցական կազմակերպութիւններում դոյութիւն ունեցող անհաշիւ տակտիկայով, այլ յերկրի ընդհանուր տնտեսական պայմաններով, վորոնք բանվորների ամբողջ մասնային չեն դրդում դեպի կազմակերպութիւն

և, տնտեսական այդ պայմանների բարենպաստութեան ջնսդրելով, նեղացնում են կապիտալիստների դեմ բանվոր դասակարգի պայքարի անհրաժեշտութիւնը: Այդ պայմաններն, իհարկե, փոխվելու յեն և այդ պայմանների փոխվելուն զուգահեռ՝ արհմիութիւններն աճելու յեն, և ամբողջ արհշարժումն այլ ուղիով կընթանա:

Իտալիա: Համաձայն եմ այն բացատրութեանը, վոր ավեց նախորդ հոետորը: Իրան կալվելացնեմ, վոր, նախ, հարկավոր է նկատի ունենալ այն մոմենտը, վոր վերջին ժամանակներս Միացյալ Նահանգներում իրենք կապիտալիստները խիստ շատ են բարձրացնում աշխատավարձը: Աշխատավարձի բարձրացման այս պրոցեսը նկատվում էր 1917 թվականին, 1919 թվականին և ավելի ուշ: Յեթե համեմատենք ներկայումս գոյութիւն ունեցող ունեւ աշխատավարձն այն աշխատավարձի հետ, վոր գոյութիւն ունեւ 1911 թվականին, ապա դուրս կգա, վոր նա նշանակալիորեն ավելի բարձր է: Արհշարժումն իր զարգացման պրոցեսում սկզբում կառուցվում էր և այժմ էլ կառուցվում է ըստ ցեխային հատկանիշի, ըստ պրոֆեսիայի հատկանիշի, և արհմիութիւններն ստեղծվել են առավելաբար վորակյալ բանվորների համար: Այդ միութիւններին զլուխ են կանգնել վորոշ առաջնորդներ, վորոնք փակ կազմակերպութիւն են ներկայացրել ու ձգտել են լավ պայմաններ ձեռք բերելու իրենց անդամների համար: Արհեստակցական միութիւններին շրջանակներն ընդլայնելու և անորակ բանվորներին արհմիութիւններում կազմակերպելու համար դրդապատճառներ նրանք չեն ունեցել: Բացի դրանից ամերիկյան արհշարժումն ստիպված է հաշվի առնել շատ լավ կազմակերպված կապիտալիզմը, վորն իր տրամադրութեան տակ ունի բոլոր միջոցները, վորպեսզի հակադրի արհեստակցական միութիւններում բոլոր բանվորների կազմակերպվելուն: Յեթե, ասենք, տրեստացված արտադրութիւնն իր ձեռնարկութիւններից մեկնում է հանդիպում և արհմիութեան չափազանց ուժեղ դիմադրութեան, նա դիմում է մինչև իսկ այնպիսի միջոցի, ինչպիսին այդ ձեռնարկութիւնը փակելը և աշխատանքն իր մի այլ ձեռնարկութիւնը փոխադրելն է: Այսպիսով ջախջախվում է արհեստակցական միութեան դիմադրութիւնը: Ամերիկյան կապիտալիզմն ինքնուրույնաբար բարձրացնում է բանվորների աշխատավարձը, բայց ընդամենն վոչ մի տնտեսական իշխանութիւն չի տալիս, նրանց կյանքի տնտեսական բարելավման հա-

մար պայքարելու հնարավորութիւն չի տալիս: Հետեյալ շատ կարեւոր հանգամանքն Ամերիկայում այն է, վոր կապիտալիստները տարբեր ազգութիւնների պատկանող բանվորների միջև գոտութիւն են սերմանում: Մեծ մասամբ անորակ բանվորներ Յեվրոպայից յեկած բանվորներն են կամ, վերջին ժամանակներս, նեգր բանվորները: Կապիտալիստներն աշխատում են գոտութիւն սերմանել զանազան ազգութիւնների պատկանող բանվորների միջև: Ըստ ազգութիւնների կատարվող այդ բաժանումը տեղի յե ունենում նաև վորակյալ ու անորակ աշխատանքի հատկանիշով: Կապիտալիստները սիստեմատիկաբար հակամարտութիւն են սերմանում տարբեր ազգութիւնների պատկանող բանվորների միջև, անկախ նրանց աշխատանքի վորակավորութիւնից: Վերջին 10 տարում ամերիկյան կապիտալիզմն ավելի լուսավորված քաղաքականութիւն է վարում այն տեսակետից, վոր իր արհեստակցական, այսպիս կոչված կոմպանիական միութիւններն և ստեղծում: Նա բանվորներին գրավում է դեպի իր ձեռնարկութեան աշխատանքը, բանվորներին շահագրգռում է այդ ձեռնարկութեան շահույթներով և այլն: Ամերիկյան կապիտալիզմը հակում ունի հորիզոնական բաժանումը փոխարինելու ուղղաձիգ բաժանումով, այսինքն՝ պառակտելու բանվոր դասակարգը, գրավելով նրան ու շահագրգռելով հոգուտ կապիտալիզմի:

Ոսլ: Յես հարցին մոտենում եմ վեչ թե թեորիայի տեսակետից, այլ պրակտիկայի տեսակետից: Ճիշտ է, ամենից լավն այն է, վոր բանվորներին կազմակերպեն լավ ժամանակներում, բայց բանն այն է, վոր Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիայի անդամների շարժման վիճակադրութիւնը ցույց է տալիս, վոր Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիան աստիճանաբար կորցնում է անորակ բանվորներին ու իր կազմի մեջ ավելացնում է վորակյալ բանվորների քանակը: Այսպիսով՝ Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիան ցանկանում է լինել և աստիճանաբար դառնում է մի կազմակերպութիւն, վորն իր կազմի մեջ ունի պիտավորապես վորակյալ բանվորներ: Արհեստակցական շարժումն Ամերիկայում անորակ բանվորներին գրեթե չի ընդգրկում: Արդյունաբերութեան խոշոր ճյուղերն արհմիութիւնների կողմից չեն ընդգրկվում: Արդյունաբերութեան այդ խոշոր ճյուղերից միայն ամէսի ու յերկաթուղային արդյունաբերութեան բանվորներն են վորոշ չափով կազմակերպված, և այն էլ ամիսարդյունաբերութեան մեջ աշխատում են 65 տոկ, չկազմակերպված բանվորներ: Արդյունաբերութե-

թյան այնպիսի ճյուղերի բանվորները, ինչպիսիք են պողպատա-
ձուլականը, կառուցովինը, ավտոմոբիլայինը, արհեստակցակա-
նորեն գրեթե բոլորովին կազմակերպված չեն: Կարելի չե ասել,
վոր անորակ բանվորներին արհմիությունները չեն ընդգրկում:
Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիայից դուրս կանգնած մի
շարք արհեստակցական կազմակերպություններ կան, վորոնք աշ-
խատում են կազմակերպել անորակ ու սակավորակ բանվորներին:
Ինչ վերաբերում է աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիայի ա-
ռաջնորդների դերքին, ապա առաջնորդներից մեկը, որինակ, մե-
տաղագործների արհմիության նախագահը, միանգամայն բացա-
հայտ կերպով հայտարարել է, վոր ինքը չի ցանկանում անորակ
բանվորներ գրավել իր միության մեջ: Արհմիությունների առաջ-
նորդների նկատմամբ դրությունն այնպես է, վոր ստեղծվել է
առաջնորդների մի կաստա, վորը բաղկացած է միքանի տասնյակ
այնպիսի մարդկանցից, վորոնք ստանում են հսկայական դրույք-
ներ—տարեկան մինչև 10 հազար դոլլար և ավելի, ստեղծվել է
մի կաստա, ուր ներս ընկնելը չափազանց դժվար է:

Դունն: Այն հարցը, վոր դրեց ընկ. Ստալինը, անարդարացի
չե դրված, վորովհետև, յեթե նրա յերկրում արհմիություննե-
րում կազմակերպված է բանվորների 90 տոկ, ապա այստեղ
իշխանությունը բանվոր դասակարգին է պատկանում, մինչդեռ
կապիտալիստական յերկիրներում բանվորները ճնշված դասա-
կարգ են, և բուրժուազիան ձեռք է առնում բոլոր միջոցները,
վորպեսզի բանվորներին հնարավորություն չտա արհմիություն-
ների մեջ կազմակերպվելու: Բացի դրանից, այստեղ գոյություն
ունեն հետադիմական արհմիություններ, վորոնց գլուխ են կանգ-
նած հետադեմ առաջնորդներ: Այն պայմաններում, վոր կան
Ամերիկայում, արհեստակցական միությունների գաղափարն իսկ
չատ դժվար է արմատավորել բանվորների գլխում: Սա չե այն
հանգամանքի պատճառը, վոր Ամերիկայում այնքան քիչ են տա-
լածված արհմիությունները:

Ստալին: Վերջին հոետորն արդյոք համաձայն է նախորդ
հոետորների հետ, վոր Ամերիկայի բանվորական շարժման լի-
զերներից վոմանք իրենք են աշխատում նեղացնել արհեստակ-
ցական շարժումը:

Դունն: Համաձայն եմ:

Ստալին: Յես չեյի ցանկանում վորևե մեկին վերավորել: Յես
միայն ցանկանում եյի պարզել ինձ համար գործերի դրության

տարբերությունն Ամերիկայում և ԽՍՀՄ-ում: Յեթե յես վորևե
մեկին վերավորեցի, ներողություն եմ խնդրում: (Պասվիրակների
Ֆիծաղ):

Դունն: Յես բնավ նեղացած չեմ:

Ստալին: Կա արդյոք Ամերիկայում բանվորների պետական
ապահովագրության սիստեմ:

Պասվիրակներից մեկը: Բանվորների պետական ապահովա-
գրության սիստեմ Ամերիկայում չկա:

Կոյլ: Նահանգների մեծամասնության մեջ գոյություն ունի
վոխհատուցում արտագրության մեջ պատահած դժբախտ դեպ-
քերի համար, ըստվորում վարձատրվում է աշխատունակության
կորստյան մաքսիմում 30 տոկոսը: Այդ բանը գոյություն ունի
նահանգների մեծամասնության մեջ: Վարձատրությունը տալիս
են մասնավոր ֆիրմաները, վորոնց ձեռնարկություններում կորս-
վել է աշխատունակությունը, բայց որևեքն այդպիսի վարձա-
տրություն պահանջում ե:

Ստալին: Ամերիկայում կա պետական ապահովագրություն
գործադրկությունից:

Պասվիրակներից մեկը: Վոչ: Այն ֆոնդը, վոր ստեղծվում է
գործադրկությունից ապահովագրելու համար, կարող է բավա-
րարել 30-ից մինչև 100 հազար գործադուրեկի բոլոր նահանգնե-
րում:

Կոյլ: Կա ապահովագրում (վոչ պետական) ինդուստրիալ
դժբախտ դեպքերից, այսինքն՝ արտագրության մեջ պատահած
դժբախտ դեպքերից: Բայց հիվանդության հետևանքով կամ ծե-
րության հետևանքով առաջացած հաղմանդամությունը բնավ չի
ապահովագրվում: Ապահովագրական ֆոնդը կազմվում է բան-
վորների մուծումներից: Ըստ եյության դործը հանգում է այն
բանին, վոր ապահովագրական ֆոնդի այդ ամբողջ գումարն ի-
րենք բանվորներն են վճարում, վորովհետև յեթե բանվորներն
այդ ֆոնդը չկազմեյին, նրանք բարձրագույն հավելում կտա-
նային, իսկ քանի վոր այդ ֆոնդը համաձայնեցված է լինում
բանվորների ու ձեռնարկատերերի միջև, ուստի և բանվորներն
ավելի պակաս հավելում են ստանում: Սա կազմում է ֆոնդի
համարյա թե ամբողջ գումարը: Ձեռնարկատերերը փաստորեն
մուծում են այդ ֆոնդի չնչին մասը, մոտավորապես 10 տոկոսը:

Ստալին: Յես կարծում եմ, վոր ընկերների համար հետա-
քըքրական կլինի, յեթե յես հաղորդեմ, վոր մեզանում ԽՍՀՄ-

ում բանվորներին պետութեան հաշիւին ապահովագրելու վրա տարեկան 800 միլիոն ուշերուց ավելի յե ծախսվում։ Նույնպէս ավելորդ չեն լինի հաղորդել ձեզ, վոր մեզանում բանվորներն արդունաբերութեան բոլոր ճյուղերում, բացի սովորական դրամական աշխատավարձից, լրացուցիչ կերպով ստանում են մոտավորապէս աշխատավարձի մեկ յերրորդը ապահովագրութեան, կենցաղի բարելավման, կուլտուրական կարիքների համար և այլն։

2-րդ ՀԱՐՅ։ Ինչո՞վ բացատրել մատայնագան բանվորական հասակ կուսակցութեան բացակայութիւնը Հյուս. Ամերիկայի Միացյալ Նահանգներում։ Բուրժուազիան Ամերիկայում ունի ամբողջ յերկու կուսակցութիւն — հանրապետական և դեմոկրատական, ամերիկյան բանվորները չունեն իրենց մասսայական կուսակցութիւնը։ Ընկերները չեն գտնում արդյոք, վոր իր մասսայական բանվորական կուսակցութեան բացակայութիւնը, թեկուզ այնպիսի կուսակցութեան, ինչպիսին Անգլիայումն և (Լեյբուր Պարտի), թուլացնում և բանվոր դասակարգի ուժը կապիտալիստների դեմ մղած նրա քաղաքական պայքարում։ Այնուհետեւ, ինչո՞ւ բանվորական շարժման լիզեմենտ Ամերիկայում, Գիքսը և ուրիշները, Ամերիկայում բանվորական կուսակցութեան սեղծելուն վնասեցանալիս դեմ են արձանագրում։

Բրոքի։ Այո, յեղել և լիզերների այդպիսի վճիռ, վոր այդպիսի կուսակցութիւն ստեղծելու անհրաժեշտութիւն չկա։ Սակայն կա փոքրամասնութիւն, վորը գտնում և, վոր այդպիսի կուսակցութեան ստեղծումն անհրաժեշտ և։ Այժմ Ամերիկայում որչիկտիվ պայմաններն այնպէս են, վոր, ինչպէս արդեն մատնանշվեց, արհարծումը Միացյալ Նահանգներում շատ և թուլ, իսկ արհարծման թուլութիւնն էլ, իր հերթին, բացատրվում և նրանով, վոր բանվոր դասակարգն առայժմ կազմակերպվելու և կապիտալիստների դեմ պայքարելու կարիք չունի այն բանի շնորհիվ, վոր կապիտալիստներն իրենք են բարձրացնում բանվորների աշխատավարձը, բավարար նյութական դրութիւն են ապահովում նրանց համար։

Սալիք։ Չե՞ վոր գլխավորապէս վորակյալ բանվորներն են ապահովվում։ Այստեղ հակասութիւն կա։ Մի կողմից, դուրս և գալիս, վոր կազմակերպվածութեան անհրաժեշտութիւն չկա, քանի վոր բանվորներն ապահովված են. մյուս կողմից, ստում են, թե արհմիութիւններում կազմակերպված են հենց ամենից ավելի ապահովված, այսինքն՝ վորակյալ բանվորները. յերրորդ կողմից,

դուրս և գալիս, վոր արհմիութիւններում կազմակերպված չեն հենց ամենից քիչ ապահովվածները, այսինքն՝ սակավորակները, վորոնք ամենից ավելի յեն կարիք գգում կազմակերպվածութեան։ Յես վոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ այդ։

Բրոքի։ Այո, այստեղ հակասութիւն կա, բայց նույն կերպ հակասական և ամերիկյան իրականութիւնը քաղաքական ու տնտեսական տեսակետներից։

Բրեքեն։ Թեև անորակ բանվորները միութիւններում կազմակերպված չեն, բայց նրանք ձայնի քաղաքական իրավունք ունեն։ Այսպիսով, յեթե կան դեմոկրատիայի մոմենտներ, ապա անորակ բանվորներն այդ մոմենտներն արտահայտում են՝ ողտվելով ձայնի իրենց քաղաքական իրավունքից։ Մյուս կողմից, արհմիութիւններում գտնվող բանվորները, յեթե նրանք առանձնապէս ծանր ժամանակ են ապրում, ողտվում են վոչ թե միութիւնից, այլ ձայնի քաղաքական իրավունքից։ Այսպիսով՝ ձայնի քաղաքական իրավունքով փոխհատուցվում և արհեստակցական կազմակերպվածութեան բացակայութիւնը։

Իգրտելու։ Հիմնական դեմարութիւններից մեկն էլ ինքը սխառեմն և, Միացյալ Նահանգների ընտրական սխառեմը։ Այնտեղ հանրապետութեան նախագահի ընտրութիւնների ժամանակ ան մարդը չի ընտրվում, ով ստանում և ամբողջ յերկրի ձայների մեծամասնութիւնը կամ նույնիսկ վորեւ մի դասակարգի ձայների մեծամասնութիւնը։ Այնտեղ յուրաքանչյուր նահանգում կան ընտրական կոլեգիաներ, յուրաքանչյուր նահանգ ունի վորոշ քանակով ձայներ, վորոնք մասնակցում են նախագահի ընտրութեանը։ Վորպէսզի նախագահն ընտրված լինի, անհրաժեշտ և, վոր նա հավաքի ձայների 51⁰/₀ը։ Յեթե 3 — 4 կուսակցութիւն լինի, այն ժամանակ իրերի այնպիսի գրութիւն կատարվի, վոր վոչ վոր չի ընտրվի, և ընտրութիւնները պետք և կոնգրես փոխադրվեն։ Ահա սա յե փաստարկ հանդիսանում յերրորդ կուսակցութեան ստեղծման դեմ։ Յերրորդ կուսակցութիւն ստեղծելու հակառակորդներն այսպէս են փաստարկում. յերրորդ թեկնածու մի առաջադրեք, վորովհետեւ այդպիսով դուք կտրոնեք լիբերալ կուսակցութեան ձայների թիվը և լիբերալ կուսակցութեան թեկնածուին ընտրելու հնարավորութիւն չեք տա։

Սալիք։ Սակայն սենատոր Լաֆոլետն ստեղծել և իր ժամանակին յերրորդ բուրժուական կուսակցութիւն։ Բանից դուրս և գալիս, վոր յերրորդ կուսակցութիւնը չի կարող ձայները տրոհել,

յեթե բուրժուական կուսակցութիւնն է նա, բայց կարող է ձայները տրոհել, յեթե նա բանվորական կուսակցութիւնն լինի:

Դեմք: Յետ չեմ գտնում, վոր նախորդ հոետորի մատնանշած փաստը հիմնական փաստ է: Ըստիս, հիմնական փաստը հետեւյալն է: Վորպես որինակ յետ տալիս եմ իմ քաղաքը, վորտեղ յետ ապրում եմ: Ընտրութիւնները կամպանիայի ժամանակ զալիս ե այս-ինչ կուսակցութեան ներկայացուցիչը և արհեստական կազմակերպութեան գլխավորին մի վորեւե պատասխանատու պաշտոնն ե տալիս, արհեստական կազմակերպութեան գլխավորին, ընտրական կամպանիայի կապակցութեամբ, վորոշ միջոցներ ե հանձնում, վորոնք նրա ոգտին են գնում, դրանից հետո նա վորոշ պրեստիժ ե ստանում այն պաշտոնի կապակցութեամբ, վոր նա ստանում է: Ստացվում է իրերի աշխարհի դրութիւն, վոր արհմիութենական շարժման լիդերներն իրենք կամ այս կամ այն բուրժուական կուսակցութեան կողմակիցներ են հանդիսանում: Ուստի բնական է, վոր յերբ յերբորդ, բանվորական կուսակցութիւնն ստեղծելու վերաբերյալ խոսակցութիւններ են ծագում, արհմիութենական շարժման այս լիդերներն աշխարհի կուսակցութիւնն ստեղծելու համար վոչնչի չեն ուզում ձեռնարկել: Ընդամին նրանք մատնանշում են այն հանգամանքը, վոր յեթե յերբորդ կուսակցութիւնն ստեղծվի, ապա արհմիութիւններում պառակտում կստացվի:

Գուգրատ: Այն, վոր արհմիութիւններում միայն վորակյալ բանվորներն են կազմակերպված, գլխավորապես նրանով է բացատրվում, վոր արհմիութեան մեջ կազմակերպված լինելու համար պետք է ունենալ վորոշ ֆոնդ ու վորոշ ապահովութիւն, վորովհետեւ անդամավճարները շատ մեծ են, և անորակ բանվորները մուտքի բարձր վճար մուծելու հնարավորութիւնն չունեն: Բացի դրանից, անորակ բանվորները գտնվում են մշտական սպառնալիքի տակ, վոր յեթե իրենք փորձեն կազմակերպվել, ապա ձեռնարկատերն իրենց դուրս կշարտի աշխատանքից: Անորակ բանվորները կարող են կազմակերպվել վորակյալ բանվորների գործոն աջակցութեամբ միայն: Այսպիսի աջակցութիւնն նրանք մեծ մասամբ չեն ունենում: Ահա այս հանգամանքն անորակ բանվորներին՝ արհմիութիւններում կազմակերպվելու հիմնական խոչընդոտներից մեկն է: Բանվորական մասսաների կողմից իրենց իրավունքների հիմնական պաշտպանութիւնն ընթանում է այդ իրավունքների քաղաքական պաշտպանութեան

գծով: Յետ հենց սրա վրա յետ հիմնում անորակ բանվորների կազմակերպութեան բացակայութեան գլխավոր պատճառը: Բաղաքական ու արհմիութենական բնագավառներում անորակ բանվորները կազմակերպված չլինելու հիմնական մոմենտը յետ տնտեսական բազան եմ համարում: Յետ պետք է մատնանշեմ ամերիկյան ընտրական սխտեմի մի առանձնահատկութիւնը, ուղղակի ընտրութիւնները, վորտեղ ամեն մի մարդ կարող է ընտրական ժողով գալ ու իրեն հայտարարել ղեմնկրատ կամ հանրապետական ու քվեարկել: Յետ հովատացած եմ, վոր Գոմպերսը չէր կարողանա բանվորներին պահել վոչ-քաղաքական ծրագրով, յեթե նա չունենար ուղղակի ձայնավորութեան ոգտին այս փաստարկը: Նա միշտ ասում էր բանվորներին, վոր յեթե նրանք ցանկանում են քաղաքականապես գործել, ապա նրանք կարող են մտնել գոյութիւնն ունեցող յերկու քաղաքական կուսակցութիւններին մեջ և աշխտեղ դրավել այս կամ այն պաշտոնը, աշխտեղ իրենց համար հեղինակութիւնն նվաճել: Այս փաստարկի ողնութեամբ Գոմպերսին հաջողվում էր բանվորներին հետ պահել բանվոր դասակարգը կազմակերպելու և բանվորական կուսակցութիւնն ստեղծելու գաղափարից:

Յ-դ ԶԱՐՑ: Ինչո՞վ բացատրել, վոր ԽՍՀՄ-ի նախնական հարցում Աւիստաւնի Ամերիկյան Ֆեդերացիայի լիդերներն ավելի հետաքեմ են, քան բուրժուաւերից ասեր: Ինչո՞վ պետք է բացատրել, վոր աշխարհի բուրժուաներ, ինչպես են պ. Բորահը և ուրիշները, արտահայտվում են հոգում ԽՍՀՄ-ի ճանաչման, իսկ Ամերիկայի բանվորական շարժման լիդերները, Գոմպերսից սկսած մինչև Գրինը, մզում էյին և շարունակում են մզել ամենահետադիմական պրոպագանդան բանվորական առաջին հանրապետութեան ճանաչման դեմ, ԽՍՀՄ-ի ճանաչման դեմ: Ինչո՞վ բացատրել, վոր նույնիսկ մի աշխարհի հետադեմը, ինչպես ամերիկյան նախկին նախագահ Վուդրո Վիլսոնն էր, հնարավոր էր գտնում «վողջունելու» Խորհրդային Ռուսաստանին, իսկ Գրինն ու Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիայի այլ լիդերները ցանկանում են ավելի հետադեմ լինել, քան կապիտալիստներն են: Ահա Վուդրո Վիլսոնի «վողջունի» տեքստը, վոր 1918 թվի մարտին ուղարկվել էր Ռուսաստանի խորհուրդների համագումարի անունով, յերբ գերմանական կաղերի գործերն արշավում էյին խորհրդային Լենին-գրադի վրա:

«Ոգովելով խորհուրդների համագումարից՝ յես կուզեյի Միացյալ Նահանգներին ժողովուրդների կողմից անկեղծ համակրանք արտահայտել ուսումնական, մասնավոր աշխատանք, յերբ Գերմանիան զինված ուժեր և շարժել յերկրի ներքը, վերադառնալ խաղաղության համար մղվող կռիվին, վաճառել յերկրի բոլոր նվաճումները և իրականացնել գերմանական դատավորություններն ու ուսումնական ժողովուրդի անազատությունը: Թեև Միացյալ Նահանգներին կառավարությունը ներկայումս, ցավով սրտի, ի վիճակի չէ ցույց տալու Ռուսաստանին այն անմիջական աջակցությունը, վերջին ցանկանում և ցույց տալ, յես կուզեյի ներկա համագումարի միջոցով հավատացնել ուսումնական ժողովուրդին, վերջին Միացյալ Նահանգներին կառավարությունը կողմագործի բոլոր հնարավորությունները, վերադառնալ Ռուսաստանին նորից լիակատար պահպանելու և նրա ներքին գործերում լիակատար անկախություն ու աշխատանքի լիակատար վերականգնումն ապահովել, վերջին ունի Յեվրոպայի ու ժամանակակից մարդկության կյանքում: Միացյալ Նահանգներին ժողովուրդին ամբողջ սրտով համակրում և ուսումնական ժողովուրդին՝ ինքնակալությունից բխող ազատություն և ինքն իր բախտի անորոշող դաժնալու նրա ձգտման մեջ» (տե՛ս «Правда» № 50, 1918 թվի մարտի 16):

Կարելի՞ յե արդյո՞ք նույնիսկ համարել, վերջին Ալեքսանդրի Ամերիկյան Ֆեդերացիայի լիդերները ցանկանում են ավելի հեռավոր լինել, քան հեռավոր Վիլսոնը:

Բռնփի: Յես չեմ կարող պատճառները ճշգրիտ կերպով բացատրել, բայց յես գտնում եմ, վերջինս այնպես, ինչպես վերջինս Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիան Ամստերդամի Ինտերնացիոնալի մեջ չի մտնում, նույն այդ պատճառներով ել Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիայի լիդերները կանգնած են խորհրդային Ռուսաստանը չճանաչելու տեսակետի վրա: Տարբերությունն ամերիկյան բանվորների հատուկ փոխադրությունից մեջ և ամերիկյան ու յեվրոպական բանվորների միջև գոյություն ունեցող տնտեսական տարբերությունից մեջ:

Ասալին: Բայց Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիայի լիդերները, վերջինս ինձ հայտնի յե, չեն առաջարկում Իտալիայի կամ Լեհաստանի ճանաչման դեմ, վերադառնալ ֆաշիստներն են իշխում:

Բռնփի: Իբրեւ որինակ մատնանշելով Լեհաստանն ու Իտալիան, վերադառնալ ֆաշիստական կառավարություններ կան, դուք դրանով ել բացատրում եք Ամերիկայի կողմից խճուղի չճանաչելու պատճառը: Այդ անբարյացակամ վերաբերմունքը դեպի խճուղի չճանաչելու բացատրվում և այն անախորժություններով, վերջինս ամերիկյան արհեստագործական լիդերներն իրենց սեփական կոմունիստներին հետ:

Դուք: Այն պատճառը, վերջինս նախորդ հոգսերը, — թի

նրանք ինչպես կարող են ճանաչել խճուղի, յերբ նրանք անհամերաշխություն ունեն իրենց սեփական կոմունիստներին հետ, — համոզիչ չէ, վերջինս խճուղի չճանաչելու վերաբերյալ քարոզը նրանց մոտ մղվում եր դեռևս մինչև ամերիկյան կոմունիստությունից չհեռանալու: Հիմնական պատճառն այն է, վերջինս Ամերիկյան Ֆեդերացիայի լիդերները դեմ են ամեն մի բանի, ինչ վերջինս և սոցիալիզմի: Յես այն տեսակետից նրանց լարում են կապիտալիստները, վերջինս ունեն «Ազգային քաղաքացիական ասոցիացիա» կոչվող մի կազմակերպություն, վերջինս աշխատում և բոլոր միջոցներով ամբողջ ամերիկյան հասարակությունը լարել սոցիալիզմի դեմ՝ ինչ ձևով ուղղում և այն լինի: Այդ կազմակերպությունը հանդես յեկավ Սյուլի Լիի բռնած դերքի դեմ, վերջինս հանդես եր յեկել հանուն Ամերիկայի առևտրական հարաբերությունների զարգացման խճուղի-հետ: Այդ կազմակերպության առաջնորդներն ասում եյին. ել ինչպես կարող ենք մենք հսկել կարգ ու կանոններն մեր բանվոր դասակարգի մեջ, յերբ լիդերներն են սկսում այդպիսի խոսակցություններ ունենալ: «Ել յգային քաղաքացիական ասոցիացիան» մի խումբ կապիտալիստներին կազմակերպությունն է, վերջինս խոշոր գումարով փող են ներդրել այդ կազմակերպության մեջ և դեկլարում են նրան: Հարկավոր և նշել, վերջինս Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիայի նախագահի տեղակալ Մատյուս Վոլին այն հետադիմական ասոցիացիայի մեջ փոխ-նախագահ է:

Բռնփի: Արհմիութենական առաջնորդներին հետադիմականություն վերաբերմամբ բերվող պատճառները հիմնական պատճառներ չեն. այն հարցի վրա ավելի խորը պետք է նայել: Ամերիկյան պատվիրակության ներկայությունը խճուղի-չճանաչելու դեպի խորհրդային Միությունը ամերիկյան բանվորների մի մասի տաժաժ համակրական վերաբերմունքի լավագույն պատասխանն ու ցուցանիշն է: Յես գտնում եմ, վերջինս Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիայի առաջնորդներին կարծիքը խճուղի-չճանաչելու նկատմամբ չի տարբերվում Ամերիկայի բանվոր դասակարգի մեծամասնությունից: Բանվոր դասակարգի մեծամասնությունը դերքը խճուղի-չճանաչելու նկատմամբ բացատրվում և խճուղի-չճանաչելու հեռավորությունից: Ամերիկայի բանվոր դասակարգն ամեն տեսակի միջազգային գործերով շահագրգռված չէ, իսկ բուրժուազիայի ազդեցությունն Ամերիկայի բանվոր դասակարգի վրա ուժեղ կերպով արտահայտվում և խճուղի-չճանաչելու նրա ունեցած վերաբերմունքի հարցում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Պատվերակութեան հարցերը և ընդ. Ստալինի պատասխանները . .	52
II. Ընդեր Ստալինի հարցերը և պատվերակների պատասխանները . .	5
	48

Թարգմ. Ա. Խոնդկարյան
Խմբ. Ս. Կիրակոսյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Պատ. սրբագրիչ Լ. Արովյան

Գլավլիտի լիազոր ի—4893, հրատ. № 463
Պատվեր № 118, տիրաժ 10.000
Հանձնված է արտադրության 3/VII 1937 թ.
Ստորագրված է տպագրության 1/IX 1937 թ.
Գինը 50 Կ.

Հայկուհրատ, Երևան, Յերեան, Ալաշկերտյան 71



И. СТАЛИН

БЕСЕДА С ПЕРВОЙ
АМЕРИКАНСКОЙ РАБОЧЕЙ
ДЕЛЕГАЦИЕЙ

Армпартиздат, Ереван, 1937